

3046

Ա. ՌԱԶՄՈՒՆԻ

“ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ”

ԹԱՏԵՐԱԽԱՂ ԳԱՂԹԱՀԱՅ ԿԵԱՆՔԷ
ԵՐԵՎ ԱՐԱՐ



ՓԱՐԻԶ

1933

891.99

Ռ - 15

891.99

Դ-15


12 MAR 2011

Ա. ՌԱԶՄՈՒՆԻ

“ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ”

ԹԱՏԵՐԱԽԱՂ ԳԱՂԹԱՀԱՅ ԿԵԱՆՔԻ
ԵՐԵՎ ԱՐԱՐ

2016



ՏՄԱԳՐ. - ԱՐԱՔՍ-ԹՕՓԱԼԵԱՆ ԵՂՐԱՐՔ
291, rue Lafayette, PARIS (10e)



08046

ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Հայոց մեջ՝ հագիւ կը կարդացուի երեւելի գրողի մը երկերը. իսկ անծանօթ ստորագրութիւն մը գնել ու կարդալ սալու հաւար, ո եւ է հայու . . . կամ հէտը շացոյ խնորագիր մ'ալ որկելու է, եւ կամ, փոյջուն յանձնարարականով, դողդղաշէն՝ ո եւ է դուռ զարնելու է:

Եւ ո՛չ մեկը, ո՛չ ալ միւսը կրնաւ սանկի: «Ազգային Կեանք»ը ո՛չ հարուստի մը կը նուիրեւ, սպագրական ծախսի հաւար, ոչ ալ գրագէտի մը. անկէ երկու տոյ յառաջաբան-նեխանի հաւար:

Այս քստերախաղը նուիրուած է քոյն'ր անոնց, որոնց հայու արիւն կը կրեն ու իրենց քաղաքական վիճակը կ'ողբան:

**

Եթէ կրֆոս կուսակցական եւ, չըլլայ, ինքզինքն Վիւրաւորուած զգալով՝ զայրանաւ: Ո՛չ, այլ. ըսէ՛ իդճիդ ձայնը եւ ականջ տուր հոս ապրողներուն, որոնք՝ քեզի պէս անխտիր կուսակցական են — հայրենասէր —:

Ներքանաշակ գրագէտը գուցէ արուեստի սրկաս զրսնէ — մանաւանդ առաջին արարին մեջ — քոյ չգայրանայ եթէ մեր ազգային կեանքի մերկոռքիւնն է: Ինծի հաւար ճշմարիտը անէն արուեստի աւելի կ'արժէ:

Կրօնասէր, մի գայրանար, ծաղրուողը կրօնք չէ, այլ կրօնքի ապականիչները:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ներկայացման, արտատպման եւ թարգմանութեան իրաւունքը վերապահուած է: Դիմել վարի հասցէին:

Tous droits de présentation, reproduction et traduction réservés. S'adresser à l'auteur :
M. A. SÉFÉRIAN
40, RUE EMILE-ZOLA, ASNIÈRES (SEINE)
FRANCE



1984-2002

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԶԱՔԱՐ. 26 սարեկան: Քնաս մարդու դեմք: Երազող
այգեր: Խօսուածքին ինկնալստան շեշտ:

ԽԱԶԻԿ. 28 սարեկան: Քիչ նիհար բայց առողջ
կազմուածք: Չղայնոտ է, միշտ բանով մը կը խաղայ:
Ամեն շարժում արագ: Զաբարի փեսան:

ՎԱՐԴԱՆ. 23 սարեկան: Անցկոտ տղայ է, բայց կը
խօսի այնքան զսպուած բարկութեամբ եւ համոզուած
շեշտով, որ բոլորովին կը կարների: Զաբարի հօրեղբորոր-
դին:

ՄԻՆԱՍ. Մօտ 30 սարեկան: Կարճահասակ, քիչ մը
կուզ, ողորմելի ֆրիսունեայի նեղ, խղճալի զրիտով:

ԱՆՏՈՆ. 55 սարեկան: Անցեայ սերունդի Դաշնակ-
ցականի տիպար: Հօրեղբայր Զաբարի, հայր Վարդանի,
աներհայր Խաչիկի:

ՃԱՆՃԻԿԵԱՆ. Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ: 55
սարեկան:

ՍԱՀԱԿ. որ կ'ըսուի Պասուելի: 50 սարեկան: Քրիս-
տոնեայ: Զարուհիի հայր, Լազրուի անուսին, Զաբարի
աներհայր:

ՂԱԶԱՐ. 27 սարեկան:

ՍԵՐԳԷՅԵԱՆ. 30 սարեկան: Երկմիտ դաշնակցական:

ԶԱՐՈՒՀԻ. 22 սարեկան: Կեանքոտ: Զաբարի կիներ:

ՆԱԶԼՈՒ. 42 սարեկան: Չղայնոտ կին է: Զարուհիի
մայր:

ՍՈՒԼԹԱՆ. 45 սարեկան: Անտոնի կին: Վարդանի
մայր:

Վերջին արարին 20էն 40 սարեկան ժողովականներ:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնէ Անտոնի սան մեջի նա-
շաստահր: Կահաւորունը՝ չարհաւոր: Ասիական ու եւրո-
պական խառն կարասիներ: Աջ դուռը խոնակոց կը սանի,
իսկ ձախը ննջատենեակ: Բիւնացի դուռը փողոցի վրայ
կը նայի՝ որու ամեն բացուելուն կ'երեւի՝ պարտեզի վը
կանաչուքիւնը: Դրան ձախ կողմը գոյգ վարագոյրներով
չայն պատուհան: Սեղան եւ աթոռներ: Պատի աջ երկայն-
քին սեխը, որուն վրայ կախուած են շնտանեկան եւ հայ
հերոսներու նկարներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՉԱՔԱՐ ԵՒ ՄԻՆԱՍ

ՉԱՔԱՐ (որ զուարեացող մեկու մը պէս քոյլ, նսած
է սեխիին ծայրը, չոր ժպիտով՝ խորապէս նայելէ վերջ) .

Ըսելիք շատ բան կայ, շատ և այլազան, որ կրնայ
ձեր մոլուժիւնները աղտոտել, բայց հիմա վազ անց-
նինք բոլորէն: Որովհետեւ յաճախ, շատ շիտակ խօսք,
ամէն բանի վերջակէտը փնտռելու չէ, պարզ այն պատ-
ճառով որ կը շուարինք ու մտքերնիս կը դանդաղի:
Կը սխալինք...

ՄԻՆԱՍ. (որ իր համեստ հազուսին մեջ նշմարիտ
երիտանեայի մը երեւոյթն ունի, նսած է աթոռի մը
ծայրը՝ օտարոսի) Ի՛նչ ըսել, որ ըսածնուդ վրայ ոչինչ
կարելի է աւելցնել... (Միջոց մը) Բարակը մտմտալ...
խելքս չհասնիր... եղածին հլու հպատակն ենք: Ի՛նչ
զրած է հոս, ի՛նչ տնօրինած է... չէ՞. երկրին ու ան-

հուն երկնքի միակ տէրն է ամենակարող... Մենք ալ բացառութիւն...

ՁԱՔԱՐ (ընդմիջելով) Պարոն Մինաս, կը սնդեմ ու կը կրկնեմ: Այդ մտային հիւանդութիւն մըն է, որ գերեզմանէ մը աւելի տխուր է: Մտածել զժողովք եւ արքայութեան մասին, կը նշանակէ ինքզինք կեանքի մէջ միշտ սարսափի ենթակայ պահել:

ՄԻՆԱՍ. Կամ հակառակը:

ՁԱՔԱՐ. Այսինքն...

ՄԻՆԱՍ. Պարզ է, չէ՞: Այն մարգիկ որ չեն վախնար ամենազորէ մը, Տէրս զանոնք «գայլ» կ'անուանէ:

ՁԱՔԱՐ. Երեւի ասիկա իր իսկութեան մէջ շիտակ ըլլայ: Բայց ես յամառութեամբ կը կրկնեմ թէ զժողովքն ու արքայութիւնը հոս է, և, հաւատայ խօսքիս, ընտրութիւնն ալ մեր ձեռքը:

ՄԻՆԱՍ. Ձեր հասկցած կերպով:

ՁԱՔԱՐ. Ի հարկէ՛, մեր հասկցած կերպը աւելի առողջն է և ըմբռնելի: Ահա թէ ինչպէս: Եթէ կ'ուզէք որ կեանքը զժողովք ըլլայ, ամէն բան սև կը տեսնէք, ամէն պատահար կը չափազանցէք ու դուք ձեզ հոգեպէս կ'ընկճէք: Միտքը այսպէսով, այսպիսի մոլորութիւններով կը տարուի, որ այլևս անըտեմելի հիւանդի մը վատ տրամադրութիւնը, ծուլութիւնը, վախը, սարսափը, վերջապէս ամէն մեղքիս վրայ, կը սկսի մարդ ինքզինքն ալ ատել... Այս է զժողովքը: Պիտի ըսէք կա՞յ արքայութիւն: Ի հարկէ՛ ոչ, մանաւանդ քսաներորդ դարուն, ուր մարդոց մէջ սատանան, ըսել կ'ուզեմ, խաբելու, չարչարելու, շահագործելու

մարմաջը աւելի նուրբ է քան թէ երէկ, բայց բոլորին հետ կան մեղմացուցիչ պարագաներ, այսինքն՝ հասկնալ իրերն եղածին պէս ու կեանքը տանելի վիճակի մէջ պահել:

ՄԻՆԱՍ. Որ ի՞նչ ըլլայ:

ՁԱՔԱՐ. (ընդմիջելով) Ի հարկէ ձեզի համար ոչինչ: (ստեղծ մը) Ուրեմն ձեզի համար հոգիէն զատ ոչինչ չկայ:

ՄԻՆԱՍ. Որովհետեւ մարմինը հող պիտի ըլլայ...

ՁԱՔԱՐ. (ընդմիջում) Թողունք ասոնք: Կ'ատէք հայրենիքը, որովհետեւ դուք ձեզ հիւր կը նկատէք: Կ'ատէք ազգութիւնը, որովհետեւ բոլոր մարդիկ, ահասուններ՝ բոլորը մէկ հօր զաւակ կը նկատէք, ու բոլորի միակ, հօր արքան է... բայց՝ կեանքի մէջ՝ ինչո՞ւ կը ձեռնաք որպէս թէ կ'ատէք ամէն ինչ որ ազնիւ է, գեղեցիկ...:

ՄԻՆԱՍ. (ընդմիջելով) Ներողութիւն: Ըսէք ինչ որ սատանայի բան է...:

ՁԱՔԱՐ. Տէր Աստուած, հիմա շիտակ ըսէք, աղք, հայրենիք, մշակոյթ, ասոնք բոլորովին ձեր սրտին չե՞ն խօսիր:

ՄԻՆԱՍ. Ձեմ հասկնար, ոչ ալ կը տեսնեմ աղք ըսածդ: Ամէն բան հոգիէն կը սկսի և հոգիով կը վերջանայ: Աւետարանը մեր ճամբան է, մեր նպատակն ալ մեղաւոր հոգիի փրկութիւնն է:

ՁԱՔ. Ուրի՞շ:

ՄԻՆ. Մնացածը մեր գիտնալիք բանը չէ:

ՁԱՔ. Եղբայր, իմ ամենէն տարօրինակ գտածս է ձեր Աստուծոյ պահանջկոտութիւնը: Ինք կ'ըսէ թէ եղածն ու ըլլալիքը ինքն է: Լաւ: Թէ ամէն բան իր ասին մէջն է: Լաւ: Քանի որ ամէն բան իրմէ կախ-

ուած է, ալ որմէ՞ կը նախանձի ու խստիւ կը պահանջէ իրեն աղօթել, իր փառքը երգել: Հէ՞...
Մին. Ինք կատարեալ է, իսկ մենք փրկուելու պէտք ունինք:

ՁԱՔ. Փրկուի՞լ: Ինչէ՞ն:

Մին. Սատանայի սաղարանքներէն:

ՁԱՔ. Թող սատանան ոչնչացնէ...
Մին. (նեղուած ընդմիջում) է՞:

ՁԱՔ. Ի՞նչ կայ: Նեղացա՞ք:

Մին. Ո՛չ: Ինծի ներողութիւն:

ՁԱՔ. Լա՛ւ, լաւ ալ չխօսինք: Գինի մը կը խմէ՞ք:

Մին. Շնորհակալ եմ: Սովորութիւն չունիմ:

ՁԱՔ. Գոնէ սու՛րճ մը:

Մին. Շնորհակալ եմ: Սովորութիւն չունիմ:

ՁԱՔ. Վերջապէս հայկական սովորութիւն է:

Մին. Ոչի՛նչ, ոչի՛նչ, սովորութիւն չունիմ... հա՛,

ինծի ներողութիւն:

ՁԱՔ. Ինչո՞ւ կ'աճապարէք:

Մին. Ոչի՛նչ, ոչի՛նչ, սովորութիւն չունիմ շուտ...
չուտով ժողովի ըլլալու եմ:

ՁԱՔ. Ի՞նչ ժողով:

Մին. Ժողովը...
ՁԱՔ. (ընդմիջում) Օրինակ՝ մենք ժողով կ'ընենք

ազգը փրկելու համար...
Մին. Մենք ալ հողին...
ՁԱՔ. Զարմանալի բան: Մենք մեր հայրենիքն

ենք կորսնցուցեր ու գիշեր ցորեկ զայն փնտռելու համար է որ ժողով կը գումարենք:

Մին. Իսկ մենք... Մարդը ծնունդով մեղաւոր է, մենք ալ կը ջանանք կատարեալ ըլլալ:

ՁԱՔ. (սպասած նայելէ վերջ) Բարեկա՛մ, եթէ սիրտըդ ալ լեզուիդ պէս միամիտ ու մաքուր է, հաւատայ խօսքիս, հազար երանի քեզի:

Մին. Կը կարծեմ... Աստուած գիտէ (ոտքի ելած է):

ՁԱՔ. Ի՛նչ որ ալ ըլլայ, նայեցէք որ իմ հողիս փրկութեան համար չաղօթէք:

Մին. [Երթալու ասեմ] Ինչո՞ւ:

ՁԱՔ. Որովհետեւ ձեր վրայ հաւատք չունիմ:

Ձեր մէջ երկու մարդ կ'ապրի:

Մին. [դրան մօտ] Մեղայ քեզ... ո՛չ, եղբայր, ո՛չ, օր կու գայ, ժա՛մանակ, որ սատանան ձեզ ծաղրի առնէ ու դուք ձեր թերահաւատութեան համար չարաչար զղջաք... նայեցէք որ ուշ չըլլայ:

ՁԱՔ. Անհող եղէք: Ես գայլէն չէ որ կը վախնամ, որովհետեւ գայլին գայլ ըլլալը գիտնալով կը զգուշանանք իսկ ոչխարի մորթ... [ալն պահունք որ դուրս պիտի բանան, Վարդան գայն մեկեմ հրելով կը մտնէ, իր ետեւէն Ղազար]:

ՏԵՍԻԼ Բ.

ՁԱՔԱՐ, ՄԻՆԱՍ, ՎԱՐԴԱՆ, ՂԱԶԱՐ

ՎԱՐԴԱՆ. Բարև:
ՂԱԶԱՐ. Բարև ձեզ:
ՁԱՔԱՐ և ՄԻՆԱՍ. Բարև:
ՎԱՐԴԱՆ. [վերէն վար Մինասին նայելէ վերջ] Ի՞նչ պէս ես, կիներու մուկ...
Մին. Ե՛ս: Շնորհակալ եմ: [կը մեկնի]:
ՂԱԶԱՐ. Է՛, Զաքար, ընտո՞ր ես:
ՁԱՔ. Կը տեսնես:
ՎԱՐԴԱՆ. Այդ օձի չապիկն ի՞նչ բանի էր:

ՉԱՔ. [ընդմիջելով] Աղուոր մանչս, Դաշնակցութիւն ըսուածը ներդաշնակութեան մարմնացումն է, եթէ անոր պատէն քար մը իյնայ, դաշնակորման անեղ զօրութիւնը կը ճչայ և ինկող քարը ան ու դողով իր տեղը կը դառնայ...

ՂԱԶ. Աւելի շուտ՝ այս անգամ Բաջաղունինն հոգեառի պէս ձեր դրան առջև կը սպասէ:

ՉԱՔ. Մինչև մահ թոյլ չենք տար որ մեր անկողնին մօտենայ: Իսկ մինչ այդ՝ աւելի քան երբեք՝ կանք ու կը մտնք:

ՂԱԶ. Ինծի նայէ՛, այդչափ ճի՛ք դուրս մ'ըլլաք: Քիչ մը եղածը իր արժէքով գնահատեցէ՛ք: Այս անգամ որդը արմատը կը կրծէ...

ՉԱՔ. Թէ ի՛նչպէս: Ո՛ւր տեսար այդ:

ՂԱԶ. Կոյրերն իսկ տեսան և մեռելները զգացին: Չէ՞, վտարել երէկի՛ ամենէն հաւատարիմը...

ՉԱՔ. Ինչպէս Ստալին վտարեց երեկի յաղթական Տրոցկին, այնպէս չէ՞:

ՂԱԶ. Տրոցկին մօրս բարեկամը չէր, բայց, ի՞նչ կապ ասոր հետ:

ՉԱՔ. Նոյն բանն է, մինչև դէմքերը չփոխուին, վիճակները, կեանքը նոր թափով չի քալեր:

ՂԱԶ. Դէմքերուն հետ կրնայ փոխուիլ անունն ալ:

ՉԱՔ. Ինչո՞ւ չէ եթէ պէտք ըլլայ: Բայց ատկէ ձեզի ի՞նչ օգուտ: Եթէ կը կարծէք թէ Դաշնակցութիւնը մէկ օրէն միւսը կրնայ քայքայուիլ ձեզի ի՞նչ օգուտ: Սօսքը մէջերնիս, եթէ ատանկ բան մը պատահի, այդ գացողներէն եօթ նիհար եզներ կրնան ծընիլ, որ ձեզ, միւսները և հետագայ ծնողները կը կլեն և չեն կշտանար:

ՂԱԶ. Հիմակուհիմա դուք ձեզ կերէք, վերջը...

ՉԱՔ. (ընդմիջում) Ենթադրէ թէ Դաշնակցութեան գլխուն հայ մը պատահի: Ծօ. եթէ մեր մարդուած բանակը հրապարակ իջնէ, ձեզի պէս կէս համայնավարները իբր ֆաշիստ՝ Խաւրիա կը ճամբեն: Եթէ մենք իջնենք հրապարակ, դուք միայն ջրկիր կրնաք ըլլալ:

ՂԱԶ. Փչէ՛ մինչև պայթի...

ՉԱՔ. Մինչ այդ, սիրտդ դող չելլէ, մեր շարժումը անդունդին մօտեցող ժողովուրդը ետ դարձնելու մէջն է: Կը հասկնա՞ս, հայ ժողովուրդը անդունդին եզրը հասած է:

ՂԱԶ. Գէշ նշան... Կայսրութիւն կերտել փափաքողներու վրայ հաւատք ընծայելու համար:

ՉԱՔ. Ե՛հ, եթէ գէշ ըլլայ մեզի լաւ կ'ըլլայ ձեզի: Մէկուն հասած չարիքէն, ուրիշի մը բարիք կը ծնի:

ՂԱԶ. Ամէն չարիք դուք ձեր ձեռքով էք ըրեր: Եթէ մինչև օրս հոն ու հոս մխտուած դրամները Հայաստանը չի ներու տրամադրուէր, հաւատայ, այս ժողովուրդին մէկ մասին համար տեղ կը բացուէր այնտեղ և նոր արկածախնդրութիւններու ետևէ չէիք ըլլար:

ՉԱՔ. Գուցէ իրաւունք ունիս, բայց ե՞րբ ենք մերժեր Հայաստանին օգնել:

ՂԱԶ. Դգալով ապուր կու տայիք. կոթով աչք կը հանէիք: Մէկ կողմէն. իբր թէ Շիրակի աղէտ է ևայլն, քառսուն յիսուն հազար ֆրանք կու տան, ըսելու համար թէ Հայաստանին կ'օգնեն, իսկ միւս կողմէ՛ երկրի մէջ, աւազակախումբեր կամ գաղտնի կաղմակերպութիւն կը ստեղծեն, որ երկրի իշխանութեան կ'արժէ մէկ միլիոնի և մի քանի տասնեակ հողի կեանքին: Երբ իրենց սև ծրագիրները ջուրը իյնան, այս անգամ, պառաւ կ'նիկներու պէս աղի արցունք կը

Թափեն, թէ՛ հոն ազատութիւն չկայ, թէ՛ երկրի դռ-
ները գոց են: Եթէ բան մը չէ, սիրտ կը պղտորէ:

ՉԱՔ. Ղազար, կարծեմ այդ կէտի մէջ համակար-
ծիք ենք, մենք ալ ճիշդ այդ հրէշութեան դէմ է որ
կոխ կը մղենք:

ՂԱԶ. Եթէ ուշ չէ:

ՉԱՔ. Ուշ չէ քանի որ ապրելու ուժ կայ: (լուռ.)

ՂԱԶ. Կը տեսնենք: (ժամանակ) Ան չէ, ի՞նչ եղաւ
ձեր հողի խնդիրը: Տուն պիտի շինէ՞ք:

Դեռ չեկան, երկու օր է հարսանիքի են: Ինչո՞ւ
կ'աճապարես:

ՂԱԶ. Եթէ պիտի շինէք ես ալ սկսիմ, թէ չէ,
լերան վրայ առանց դուռ դրացիի չ'ապրուիր:

ՉԱՔ. Մանաւանդ հայ չեղած տեղ: (լուռիւն)
Կարծեմ այսօր պիտի գան:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ՎԱՐԴԱՆ ԵՒ ԽԱՉԻԿ

ԽԱՉԻԿ. Բարև ձեզ (ձեռք կուտայ Ղազարին) Ի՞նչ-
պէս ես:

ՉԱՔ. Բարև (վարդանին բաներ մը կ'ըսէ, որը եր-
կու գաւաթ եւս բերելով գինի կը լեցնէ):

ՂԱԶ. Գէշ չէ, դուռն ի՞նչպէս ես:

ԽԱՉԻԿ. Կ'ապրինք:

ՂԱԶ. Մարդո՞ւ պէս:

ԽԱՉԻԿ. Չէ՛, շան պէս:

ՂԱԶ. Լսածիս համեմատ ախանջէդ սկսեր ես կար-
մրիլ ու մատներուդ հասնելու մօտ է եղեր:

ԽԱՉԻԿ. Իրա՛ւ է: [գինիի գաւաթին հետ խաղալով]

Բայց մեռնելէս վերջ եթէ սոկորներս գերեզմանէն
հանեն ու խօսիլ տան, հաւատայ անոնք միշտ «հայ
եմ» պիտի ազդակին:

ՎԱՐԴԱՆ. Վերցուցէ՛ք, տղաք այդ սոկորներու
կենացը մէյմէկ գաւաթ:

ԽԱՉԻԿ. Իմ երազ արքայիս կենացը, որ կեանքը
կոխ է բաւ, միշտ կոխ'ւ, միշտ կոխ'ւ, միշտ կոխ'ւ:

ՎԱՐ. Քրիստափո՛ր: [իւրաքանչեւ կը խմեն]

ԽԱՉԻԿ. [Չափարին] Ա՛ռ նամակները: [գրկանեն
ծրար մը հանելով կուտայ] Լեցո՛ւր, Վարդա՛ն, լեցո՛ւր:

ՂԱԶ. Մէյ մը շունչ առ, ի՞նչ իրարու ետեւէ:

ԽԱՉԻԿ. Վազը երբ մեռնիս, գերեզմանին մէջ
շունչ առնելու ատեն շատ կայ:

ՂԱԶ. Ուրեմն Հայաստանի անմահութեան կենացը:

ՎԱՐ. Անոր հետ միասին քունէ՛ն նոր արթնցող-
ներու երկար կեանք, [կը խմեն] Չաքա՛ր, ինչո՞ւ ե-
կեր էր այդ բողոքականը:

ՉԱՔ. [նամակ կարդալով է զբաղած] Վերջը կ'ըսեմ:

ՂԱԶ. Բողոքականներուն չէք հաւնիր, բայց դուր-
սէն նայողի աչքին դուք ալ անոնց չափ մտլի էք:
Միայն այն տարբերութեամբ, որ, եթէ դուք խնդի
կարմրած աչքերով ամէն բան կարմիր կը տեսնէք:

ԽԱՉԻԿ. [ընդմիջելով] Կարմիր, կարմիր, ի՞նչ կայ
աւելի հրաշալի քան կարմիրը: Կարմիրը կոխ ցոյց
կու տայ, կարմիրը կեանքի, շարժումի, եռացող արիւ-
նի գոյնն է: Կարմիրը խնձորի, երիտասարդի, թար-
մութեան նշան է: Ուրկի՛ց ուր նմանութիւն: Մօ՛,
անոնք ամէն բան սև կը տեսնեն, սև, մեռած
հոտած: [կը խնդան] Այլանդակ չէ՞, եթէ կեանքը կը

ընդունին եղածն ու ըլլալիքը, այսինքն դժոխքն ու արքայութիւնն, պէտք է իրենց ընտրութիւնը հոս ընեն: Կ'ուզե՞ս զրախտ, մոռցիր թէ զգայուն լարերով խիղճ ունիս, եղիր գայլ բայց ձեացիր գառ, աջ ու ձախ փորդ կշտացնելու նայիր, որ հանդիստ քուն ըլլաս: Իսկ եթէ կը կարծեն թէ կեանքէն վերջ նոր կեանք պիտի ստեղծուի, ես իրենց լաւագոյն խրատը կրնամ տալ: Ո՛րքան շատ ապրին, մեղքերնին այնքան կ'աւելնայ, ուստի օր առաջ, քանի դեռ մեղքերը շատ չեն, թող խմեն երկու գաւաթ ֆրիստոսի արիւն, առնեն սուր դանակ մը, կանչեն «ես Ռապպի ես քեզի կու գամ», և արքայութեան օղանաւի մէջ տեղ բռնեն: [Կը խնդան] Բայց մեր տարիքին, երբ դեռ միւսը հում հում կ'ուտենք ու գինին առանց ծամելու: [Կը խնդան] Ծօ՛, Սողոմոնը, որ իմաստունի տիտղոսով պսակուեցաւ, իր ամէն բան պարապ է ըսելուն ի վարձ, այդ անպիտան մարդը նախ վայելեց, ահագին երկիրներ գրաւեց, աշխարհի ամենէն հարուստը եղաւ, անհամար կիներ պահեց, կարծես իր տունը պոռնկանոց էր, երբ ամէն բանէ աչքը կշտացաւ, ամօթ է ըսել, էր, երբ ամէն բանէ աչքը կշտացաւ, ամօթ է ըսել, զիլ, այն ատեն, որպէս այրած սրտի մխիթարանք, ելաւ առանց ամչնալու, ամէն բան ունայնութիւն է ըսաւ: [Կը խնդան]:

ՂԱ.Ձ. Ինչ որ ալ ըլլայ՝ շիտակ է մարդուն ըսածը: ԽԱ.Ձ.Ի.Կ. Բարա՛, բարա՛, կա՞ ասիկայ:

ՎԱ.Ր. Ամէն բան բարայի վրայ կը ձեւեն:

ՂԱ.Ձ. Բարան ամենամեծ չարիքն է: Եթէ կայ բան մը որ չէ կարելի բարայի վրայ ձեւել, ան ալ խիղճն է: ԽԱ.Ձ.Ի.Կ. Խի՞ղճ: Մէկ հոգի կը սպանես մարդաս-

պան կ'ըլլաս, հազար սպանէ, եղար հրաշալի հերոս մը...

ՂԱ.Ք. Խիղճը զատ բան է, Խաչի՛կ, անիկա կայ ամէն... .

ԽԱ.Ձ. (ընդմզ.) Խիղճ: Ի՞նչ խիղճ: Ծօ՛, երբ մեր տարիքին խղճով ապուր կ'եփենք, կը նշանակէ թէ դեռ մօր կաթի պէտք ունինք: Խիղճը ցոյց մըն է միւսայն, ինքզինք չարիքէն վերջ մխիթարելու հնարք: Ի՞նչ բան է խիղճը: Նայէ՛, երբ եղբօրս ապտակ դարնեմ խղճի խայթ կ'ունենամ. մի՛նչ անդինը, եթէ թուրք մը մորթեմ, հաւատացէ՞ք, հոգեկան բաւարարութիւն կը ստանամ: Եղա՞ւ այս:

ՂԱ.Ձ. Բռներ էք ստրուկներու կարաւան կազմելու ճամբան ու կը քչէ՛ք... .

ՂԱ.Ք. Ձէ, ձեր ճամբով մարդը պիտի փրկէ՞ք:

ՂԱ.Ձ. Ինչո՞ւ չէ:

ՂԱ.Ք. Փրկել, բայց ինչը՞, ինչէն ի՞նչ է փրկելիքը:

ՂԱ.Ձ. Մարդը մարդուն ստրկութենէն:

ՂԱ.Ք. [խնդալով] Կը հաւատա՞ս:

ՂԱ.Ձ. Ամբողջ հոգւով:

ՂԱ.Ք. Վա՛ղ անցիր: Կոխած ճիւղդ այնչափ բարակ է... .

ՂԱ.Ձ. Ինչո՞ւ: Ձէ՞ կարելի մէկ հարուստը գլխատելով հազար աղքատ աղատել մեծ ոչիլէ մը:

ՂԱ.Ք. Որ այս անգամ աղքատը իշխէ հարուստին՝ աւելի քան ուէ մեղմացուցիչ չափի: Այդ մէկդի: Ղազա՛ր, յիմար բան է յուսալ թէ մարդկութեան մէջ կրնայ հաւասարութիւն տիրել: Չի վիճինք, որովհետեւ ամէն մարդ, բնութենէն նոյն չափով օժտուած չէ, մէկը կաղ է՝ ոտք ունեցողին ծաղրին ենթակայ, միւսը կոյր է՝ աչք ունեցողին կը նախանձի, ուրիշ մը ուժեղ է՝ իր ուժի վրայ կրթնած՝ կը վախցնէ տկարա-

1984-2002
199261 19661



կազմին: Ուրիշ մը խելք շատ ունի և իր սուր մըտքով
ուրիշներ գործիքի տեղ կը ծառայեցնէ: Մէկ խօսքով,
մարդո՞ն մէջ «ես»ը ա՛յնքան զօրաւոր է ծնունդէն իսկ...

ՂԱԶ. (ընդմիջում) Ծնունդէն չէ, նախապաշարում
է: Օրինակ. թող իմ դաւակն նախապաշարող մտքերէ
հեռու ապրի, իրեն համար հայ և թուրք նայն բանը
պիտի ըլլայ:

ՎԱՐ. Այս գուցէ շիտակ է:

ՁԱՔ. Ուրեմն, այդ հաշուով, կրնա՞ս, հա՛, կրնա՞ս
քեզի պատկանած իրը տալ ինծի, առանց որ խղճի
խայթ զգաս:

ՂԱԶ. Բա՞ն մ'ըսիր: Երբ ամէն մարդ նոյն ա-
պուրէն խմէ, իմս քուկդ, ասոնք աւելորդ բաներ են:

ՁԱՔ. Նախ դուն քեզի համար ապրէ: Կը հաւա-
տա՞ս, թէ կուգայ երանելի օր մը, որ արեւը մէկէն
ետ դառնայ... ըսել -կ'ուզեմ, կուգա՞յ օր մը, որ
հայր ու որդի իրար չճանչնան:

ԽԱԶ. Հիմա շատ կը ճանչնան:

ՎԱՐ. Մանաւանդ Ֆրանսայի մէջ:

ՂԱԶ. Ինչո՞ւ չէ:

ՁԱՔ. Կը հաւատա՞ք թէ (աւելի ուժգին) ձեր սիրած
մէկ բանը, կինը, զաւակը ուրիշի կրնաք փոխ տալ:

ՂԱԶ. Զարմանալի մտայնութիւն: Կարծել թէ կի-
նը անշարժ գործիք մըն է որ տէր պէտք է ունենայ,
չիտակէ շիտակ տղայութիւն է: Կինը ինծի-քեզի պէս
հոգի ու մարմին ունի. թող ընտրէ իր արուն...
ՁԱՔ. Ինչպէս անասուն...
ՂԱԶ. Ի՞նչ տարբերութիւն...
ՁԱՔ. (ընդմիջելով) Ներողութիւն, ես միտք չու-
նիմ: Եւ քու երազած անասուն - մարդկութեան ալ
կարօտ չեմ: Ծօ՛, եթէ հայր ու որդի իրար չճանչնան,

մեր կեանքը շան ապուրի պէս աղտոտ կ'ըլլայ: Այդ
խմաստով ես կ'ուզեմ իմ մտքիս իմ մարմնիս, իմ կիր-
քերուս, իմ հոգիիս իշխանը ըլլալ... իշխել ուրիշին
վրայ, երբ ան ինքնապահ է, վատութիւն է, բայց չիշ-
խել իր անձին վրայ հայրխնութիւն է... Ծօ՛, կինը ո-
րուն իմ անկեղծ սէրս եմ խոստացեր, պէտք է փոխա-
րէն սէր խոստանայ ու այդ երկու մաքուր, անկեղծ
սէրէն ծնելիք սիրոյ պտուղը իմ տնկածս է, իմս պէտք
է ըլլայ, ո՛չ թէ անցորդին: Պարտէզ մը տնկեմ, հաս-
ցնեմ հողով գուրգուրալէն ու անոր շուքին մէջ,
վայրկեան մ'ըսել թէ սա իմս է, ե՛ս եմ տնկած, ես եմ
ջրած, ե՛ս եմ անով ուրախացած... ալը մէկ անգին
վայրկեանը աշխարհի փառքն է, միակ կեանքը:

ՂԱԶ. (ժամանակ) Ահա՛ թէ ինչու մենատիրական էք:

ՎԱՐ. Ղազա՛ր, մարս եղար...

ԽԱԶ. Պէտք է խոստովանիլ թէ շիտակ է:

ՂԱԶ. Հա՛րկաւ, լեղուն հոգիէն ու սրտէն ա՛յն-
քան հեռու է, որքան արեւը երկրէն:

ՁԱԳ. Վա՛ղ անցիր: Կը բաւէ ասոր վրայ խօսածնիս:

ՂԱԶ. Իրաւունք ունիս, նստած մնացի: Ժամը
քանի՞ն է:

ՎԱՐ. Վեց ու կէս:

ՂԱԶ. Ուրեմն ինծի ներողութիւն: [usfի կ'եղի]:

ՁԱՔ. Նստէ՛, է՛, կը խօսինք:

ԽԱԶ. Գո՞րծդ ինչ է, նստէ խօսինք:

ՂԱԶ. Ո՛չ, ժողովի պիտի երթամ: Ուրեմն, Ձա-
քար, ըսածս չմոռնաս:

ՁԱՔ. Շատ լաւ, շատ լաւ: [նստբու կը դնի]:

ԽԱԶ. (ետեւեմ) Երթալիք տեղդ միշտ յիշէ որ հայ ես:

ՂԱԶ. (դրան մէջ) Անհոգ եղիր, ես քեզմէ աւելի
հայ եմ:

ՉԱՔ. (ձեռք տուած ասեց) Հայ ըլլալուդ հայ ես, ինչ որ ընես չես կրնար մոռնալ, բայց նայէ որ դրականօրէն հայ ապրիս, մոլեռանդ ազգայնական պէտք է ըլլալ, ուրիշ ճար չկայ... (կը խնդան, Ղազար կ'երթայ):

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք առանց Ղազարի

ՉԱՔ. [Ետ գալու ասեց] Գէշ տղայ չէ... չէ՞, Սաչիկ:

ԽԱՉ. Վկայականը կը պակսի:

ՎԱՐ. Շատեր կան, որոնք պարզապէս ապուշ են, մոլեռանդ, յիմար յիմար կը խօսին, իսկ այս տղան յստակ միտք ունի:

ԽԱՉ. Գինի խմէ, ատոնց տեսութիւնն ու տնտեսութիւնը... (գինի կը խմէ):

ՉԱՔ. Խոստովանէ՞, ասկէ քանի մը տարի առաջ եթէ անոնցմէ մէկը պատահէր որ մեր պետերու պակասութիւնը մեզի մասնացոյց ընէր, ես կամ դուն կը խեղդէինք զայն ...

ՎԱՐ. Հիմա որ կամաց կամաց աչքերը կը բացուին, ալ հին մոլեռանդ ետապաշտութիւնը...

ԽԱՉ. [ընդմիջ.] Վա՛զ անցիր: Ըսել է կո՞յր էինք:

ՎԱՐ. Հապա ինչ կը կարծէիր:

ԽԱՉ. (վերէն վար նայելէ վերջ ծալրական շեշտով մը) Սըւոր նայէ՛, ծօ դուն ի՞նչէն ինչ գիտես, որ ելեր գլխէդ վեր քար կը շարկես:

ՎԱՐ. Հը՛, զարմանալի տղայ ես, անպայման հինգ ֆրանքի անդամատերի՞ պէտք կայ, որ «ինչէն ինչ» ըլլալը գիտնանք, կը կրկնեմ թէ դուք մինչև այսօր թանձր մշուշի մէջ կորսուած էիք, և եթէ զայն խոստովանիլ կ'անճրկիս, ուրեմն վրադ դեռ թուրքի գը-

լուխ կայ:

ՉԱՔ. Իրաւ է, Սաչիկ:

ԽԱՉ. Ի՞նչը իրաւ է, թող ըսէ՛, ի՞նչը:

ՎԱՐ. Կը կրկնեմ թէ մինչև այսօր կոյրի պէս, ինչ որ բերաննիդ են դրեր, կ'լլեր էք անարտունջ: Հիմա կը հասկնաք թէ պէտք է եղեր կանուխ արթննալ, կանուխ, արեւածագէն տառջ, երբ արեւելքը յոյսերով յղի էր, երբ դեռ ճանճերը ձեր ճակտին վրայ պտոյտի չէին ելած ու ձեր ականջին մօտ չէին վզվզար: Ըսել կ'ուզեմ, երբ դեռ սրտերը չէին պղտորած: Պիտի արթննայիք այն ատեն ու թողլով մորթին վրայի անընշան ուռերը պիտի վազէիք սրտի տունը: Դուքս թըշնամիդ աչքիդ առջևն է միշտ: Դուք պիտի մաքրէիք չերեցող թշնամին, ներսի ահաւոր թշնամին, որ սարսափելիօրէն անբուժելի է: Դուն իմ չէզոք ըլլալուս համար մարդու տեղ չես դներ, հա՞, լա՛ւ, լա՛ւ ուրեմն հիւանդութիւնդ: Սիրտը պահուած է մարմնի անդունդին մէջ: Եթէ այդ սրտին մէջ խուժած է սիֆիլիսի մանրէներ, մարմինը մեռնելու ճամբան բռնած է: Անոր դուրսէն աղուոր երեւալուն մի նայիր, ինքզինք կրնայ ոտքի՝ մահացու արտանշանէ հեռու պահել, տարի մը կամ տասը, բայց երբ ներս մտնես, սրտի տունը, հոն կամաց կամաց կը հիւծին, կը քայքայուին: Սաչիկ, եթէ օր մը այդ միլիոնաւոր մանրէները պատուելով սրտի պարիսպը խուժեն դուրս, ձեր մայրը կուլայ... [ընդմիջ.] Եղբայր, փոխանակ իրենց սիրտը մաքրելու աններելի մեղքերէ, փոխանակ պատերազմ յայտարարելու մահաբեր մանրէներու դէմ, ելեր մարմինը կը լուան... ի՞նչ մէջտեղ վլվլվլվլվլվլ... Նախ մաքրեցէք դուք ձեզի, որ վերջը ուրիշներու մասին մտածէք...

ԶԱՔ. Շիտակ է և մեր ըսածն ալ ատկէ տարբեր չէ:

ՎԱՐ. Այո՛, Խաչիկ, դաշնակցական եզոզը պէտք է մոռնայ թէ մարդ է:

ԽԱՉ. Հը՛, եղաւ զնսոց:

ՎԱՐ. Սխա՞լ է: Լա՛ւ, եթէ հոն ալ երկմտութիւն տիրէ, ձեր ծծածը ջուրով ջուր է: (ժամանակ) Սա ախորին մէջ՝ զոտոցող էջէն պէտք է խորատ առնել...

ԽԱՉ. (ընդմիջելով) Պաւա՛ր պաւա՛ր:

ՎԱՐԳ. Էջուն չես հաւնիր բայց անիկայ իր ախորին ուր ըլլալը զիտէ, իր գիտցածէն մազ մը չի շեղիր, իսկ ձեր մէջ, վա՛յ մարդկութիւն է, վա՛յ ի դժմտանք է:

ԶԱՔ. Աղէկ, բայց քու ախորդ ու՞ր է: Կան ասանկ «ես բանի չեմ խառնուիր» ըսողներ, որ շատ երկար լեզու ունին, իսկ՝ դործի ասպարէզի մէջ՝ աշնան տերեւներու պէս հովուն խաղալիք կ'ըլլան:

ՎԱՐ. Ինծի՛ նայէ, մի կարծեր թէ ամէն մարդ հովին խաղալիքն է, ո՛չ: Եթէ հրապարակի վրայ ըլլայ պարզ, անխոցելի ծրագիր որ սրտի մօտիկ ըլլայ ու գաղթահարութեան շահերուն, քաղաքական պահանջներուն գոհացում տայ, հրապարակի վրայ ըլլան անձնազո՛ւ մարդիկ, ինչպիսին եղած է ձեր հիմնադիր Քրիստափոր Միքայէլեանը, կը տեսնես այն ատեն թէ որոնք են հովուն խաղալիքը: Ի՞նչ է եղածը: Պարահանդէս, ճախօսէ, ծափ զարկ յօրանջէ: Դուք ճշմարիտ լոյսը մոռցած մշուշի մէջ խարխափելով աջ ու ձախ կը դիմէք... Ամէն մարդ յիմա՞ր է, թէ զդացում չունի: Ծօ՛ ձեր ախորը ու՞ր է: Ձեր ծրագիրը ի՞նչ է: Նըպատակ ունիք ընկերվարական ճամբով մարդիկ լծիւն փրկել որու միջոցն է հայ ժողովուրդը ջարդել, հէ՞...

ԽԱՉ. (կը սուլի) աւ սե ֆօր... .

ԶԱՔ. Ըսելիք չկայ, բայց կան պարագաներ որ պէտք է ըլլալ տգէտ, մշուշի մէջ: Աչքերը լոյս տեսնելով կը յօգնին, պէտք է քնննալ որ յոգնութիւն ատենն: Հոս խնդիրը ազիտութեան մասին չէ, թէ ոչ, ես պիտի ուզէի կոշտ ու կոպիտ գիւղացի ըլլալ քան թէ խնձորին մէջի կուտը զատող քսղօցի: Պիտի ուզէի կոյր ըլլալ միայն ազատ թռչելու երկիր և ծփացող թևեր ունենայի... .

ԽԱՉ. Պիւշպի՛ւր, ձայնդ ուրկէ՞ կուգայ:

ԶԱՔ. [ՇեօՅը փոխելով] Ի՞նչ կայ, հա՛, ի՞նչ կայսա վրան թքած քաղաքակրթութեան մէջ... . յառաջդիմութիւն, յառաջդիմութիւն: Ի՞նչ բան է ան: Ի՞նչի վրայ է առաջ վազելը: Մարդիկ մորթելու թէ առտուրնէ իրկուսն ճաղատ զլուսն ճանկրտել, գտնելու համար տանջանքի նոր դործիքներ, մարդիկ մորթելու նոր և անարկու միջոցներ: Յառաջդիմութիւն որ մարդիկ իրենց ըրածին հաշիւը չեն կրնար տալ: Ոչ, Խաչիկ, սխալ չէ՛, պիտի նախընտրէի ազէտ գիւղացի ըլլալ և Հայաստանի լեռներուն վրայ արօր վարել, քան թէ այս զարգացած իրկիրներու մէջ բոշայի կեանք վարել:

ՎԱՐ. Շիտակ չիտակ բոշայ... .

ԶԱՔ. Բոշայ, այո՛, բոշայ, աննպատակ, աղտոտ... . Վարդան, դուն իրաւունք ունիս մեր սիրտը աղտոտ է, պէտք է զայն՝ որքան կարելի շուտ՝ մաքրել, ճշդեմք թէ ո՞վ ենք, ի՞նչ է մեր նպատակը, ի՞նչ է միջոցը:

ԽԱՉ. Բայց միջոցը պէտք է ըլլայ ամէն բան որ կրնայ մեր դատին օգտակար ըլլալ: Իսկ դուն երկմիտ

ես, գիտե՞ս:

ՉԱՔ. Եպատակը մէկ է, միջոցը մէկ...

ԽԱԶ. Է՛:

ՉԱՔ. Է՛-մէ չկայ, Եախ պէտք է մենք իրար հասկնանք: Ամենէն առաջ բոլոր հայերու միաւորում և սրտերը մէկ տա: մէջ բնակեցնելը:

ԽԱԶ. Ի՞նչ անուշ կը խօսիս, քու ամէն բանդ առանկ լեզուով կ'ըլլայ:

ՉԱՔ. Խաչիկ, ինչո՞ւ չես հաւատար, ի՞նչ ունինք որ չենք կրնար կիսուել: Չէ՞, մենք բոլորս բոյալի կեանքին հասած, բոլորս նախատուած, հեղուած ու վոնտուած. պէտք է բոլորս հասկնանք, վայրկեան մը սրտերը մէկտեղինք և նայինք մեր շուրջը: Ի՞նչ է մերը: Մեր ունեցածն է մահամերձ հիւանդ մը: Այդ հիւանդը մեր բոլորիս սիրելի մայրն է: Մե՛նք՝ իր հարազատ որդիները. ժողուած իր մահիճի մօտ, փոխանակ մտածելու՝ բոլորիս ճիգերը մէկտեղել ու զայն նորէն կեանքի բերելու, այսքան անհրաժեշտ, ըստիպողական ու սարբական հարցի մասին մէկ հոգի՝ մէկ սիրտ ըլլալու, անդին բողբոջներու մեղքերը ճշտելու... Ասիկա ահա՛մ է, ամօ՛թ, նախատինք է մէկ մօր զաւակներուն համար: Խաչի՛կ, եթէ այս ժողովուրդը պիտի շարունակէ իր սոխ ու սխտորը երազել երբ անգին աշխարհներ կը փլին, ազատագրական, կենաց և մահուան կռիւ կը մղուի, թող այս ժողովուրդը անիծուի՛, շան պէս փրկատակի մը մէջ սատկի՛...:

ՎԱՐ. Հապա ի՞նչ, կա՛մ տակը կա՛մ վրան...:

ԽԱԶ. Ըսածդ շիտակ է, բայց, Չաքա՛ր, երբ տեսական հարցերը անգամ մը մարդուս զլխուն մէջ մըտ-

նէ, անկէ հանելու համար նախ հոգին պէտք է կլլէ:

ՉԱՔ. Հայոց համար տեսական հարց չկայ: Տեսական հարցերով հաջն շուները, լուսաւորչականի կռիւ մղեն, հարսանիք երազող տէրտէրն ու մեռնիլ երազող պատուելին: Տեսական հարցերով ո...դեռին քսնն բորտաները, որոնց մարմինը կը կճէ ինքնիրեն: Թող տեսական հարցերով զբաղին անո՛նք, որոնց փորը կուշտ է, անո՛նք, որոնց թշնամին սարուկ է: Իսկ մեզիպէսները, անպէտ թուղթի պէս պէտք եղած առեն ո... կը սրտն ու աղբանոց կը նետեն: Մենք հայերս սակորներու տունէն վոնտուած, ողջերու ջարդուիլը տեսնելով հոգով ջարդ ու փշուր եղած, մենք, [արագ] մեր իրաւունքը, որ սեղանէն աւելցած պատառ ո՞ջ հաց էր միայն, շունին՝ փողոցին մէջ սըլկուացող շունին նետեցին ու մեր երեսին գարշելիօրէն թքին, կոնակին ոտքի հարուած մը տուին, աչքերուն պղպեղ փչեցին, մեզ ալլանդակեցին, մեր կողերուն սակորները ջարդեցին, մեր հոգին փլեցին... [լուրիւն] Հէ՛, դուն հա՞յ ես, բոշա՛յ ես, շո՛ւն ես, ըս!՛ ինձի, կրնա՞ս մոռնալ այսքան նախատինք, կրնա՞ս... տեսական հարցի՞ր, հը՛, տեսական հարցերը անոնց որ ունեցածնին կորսնցնելու վախ ունին: Տեսական հարցերով զբաղին անոնք, որ գողնալով ուրիշի բարիքը, ուրիշի արգար իրաւունքը, այսօր խղճի խայթ ունին: Մենք ի՞նչ ենք, ի՞նչ են այդ հարցերը մեզի...:

ՎԱՐ. Վրլլուկ:

ԽԱԶ. Հը՛...:

ՉԱՔ. Ծօ, խերն անիծած, Աստուած մէկ է, որու մասին վէճ չկայ, և կ'աղօթեն նոյն Աստուծուն, այս մասին կասկած չկայ: Ուրեմն ի՞նչ բան է սա լուսաւորչականն ու բողբոջականը: Ի՞նչ բան զաշնակցա-

կանն ու ուսմիտվարը: Քանի որ Աստուած մէկ է, նըպատակը նոյն Աստուծուն աղօթել, ալ ինչ նոյն Աստուածը քառսուն կտոր ըրեր մեր քթին բերնին կ'օծենք: Հայե՛ր, մեր Աստուածը մէկ է, անիկա քառսուն մարմին: և աղօթքի ձև չունի: Հայե՛ր, մեր կուսակցութիւնը մէկ է, հայ ազգութիւնը ազատել իր բռնայի՛ վաճառուած շան կեանքէն: Այսքան պարզ հարցի մասին ելլել աշխարհ մը վլլու: հանել, իրար ծեծել, քէն ու սիս ըլլալ, ինչո՞ւ համար, ի՞նչ ունինք որ չենք կրնար կտուրի: Չի՞ բաւեր որքան սպուշ եղանք, կոյր մնացինք, թող մեզ իրարմէ հեռու պահող վարագոյրը պատռաի, բոլոր կուսակցութիւնները նոյն աստուծուն կ'աղօթեն, բոլոր կուսակցութիւնները նոյն ազգը փրկելու կ'աշխատին... Մէկդի սե կատուն մեր մէջէն, պէտք է իրար միանանք ու ըլլանք մէկ կուսակցութիւն, «Հայ Ազգ» ու ազատագրենք զայն իր բռնայութենէն: Վիճիլ ասոր համար առնուազն յիմարութիւն է...

ՎԱՐ. (լուսբեմէ վերջ) Շիտակ է, բայց ամենէն առաջ և ամենէն աւելի ձեր պետերն են որ սե վարագոյր կը բռնեն մէջտեղ: Նայե՛, անցեալներս, կոտորածներէն մէկը ճիշդ այդ հարցի մասին սապէս կը փրկուիայէր. «Հարուստը աղքատի հալէն չի հասկընար: Ուրեմն պէտք է տկարը զբաղի տեսական հարցերով», և շարունակելով իր յաղթական ճառը, կ'ըսէր. «Փրկի՛ն վրայ ճանձ մը նստելով չի կրնար զայն մեռցնել, բայց գոնէ կը չարմէ...»

ՉԱՔ. Ապուշ ըսէ:

ՎԱՐ. «Քնացողին քունը կը խանգարէ» կ'ըսէր:

ՉԱՔ. Ի՞նչպէս այդ մարդուն ազատութեան երեսին չըպոտալ: Մա՛րդ, եթէ միայն ճանձի չափ պիտի լնասես

փրկին, վզվզալով անոր ակահիջին մօտ, որ առաջ սատկէ, աւելի լաւ է քան թէ ճանձի չափ փոքրանաս: Մենք ճանձե՛ր ենք, ճանձը մեր մէջ ի՞նչ գործ ունի: Հէ՞, ճանձ ըլլալ ու քո՞ւն խանգարել, ինչո՞ւ հողին չառնեմ: Միթէ մենք այդ անպիտան հրէշի չափ այս երկիրը վայելելու իրաւունք չունի՞նք: Քունը խանգարել անոր որ իր կնճիթով հօրս մարմինը լեռնէ լեռ է նետեր, քունը խանգարել և անոր վայրենիի, վատ գողի գլուխը չջախջախե՞լ... ճանձ ըլլամ հը՞... [լուսբիւն]:

ՎԱՐ. Այդ մարդը շարունակելով իր հմուտ ճառը կը կրկնէր: «Եթէ դրանք՝ Իսրայէլի որդիքը՝ եգիպտոսի փարաւոններին քթին նստելիս, նրա քունը՝ մշիկ մշիկ կեանք վարող մարդու քունը՝ չխանգարէին, հաւատացնում եմ ձեզ, նրանցից մի ոմն Մովսէս, չէր կարող ծնուել ու նրանց ստատուածապարգե աւետեաց երկիրը տանել»...

ԽԱՉ. Ճա՛նթ:

ՉԱՔ. Այո՛, անոր ճառը կը վերջանայ, բսելով թէ Իսրայէլի որդիները դարեւ սպասեր են, մինչև Մովսէս ծնա. ուրեմն մենք ալ սպասենք: Այո՛ բայց ինչի՞ սպասում է այս: Սպասենք որ Մովսէս ծնի՞ ու իր մողական գաւաղանը ձեռքին... երկաթէ կօշիկներով և աստուածային ոգիով զբահապատ... Ծո՛, հրեան քսան դար է կը սպասէ, եկա՞ւ Մովսէս, սպասե՞նք...

ՎԱՐ. Մինչ այդ, սիրելի փոթորկոտ հողի, քանի վայելքներու լոյս աշխարհը մանելու բախան ունինք, ուտենք լոմենք ու փառք տանք արարչին, որ սպասման հանգիստի օրերն երկարէ:

ՉԱՔ. Եթէ ինզիրն ուտել խմել ըլլար, ամէն

մարդ ալ կ'ուտէ ու կը խմէ: Եղբայր, երբ կ'ապրինք՝
 պէտք է աշխատինք մեր պոյուծիւնը շարժումով մը
 հաստատել: Իսկ մեր յաւիտեան իշխանները, կը ձե-
 ւանան ս'յնքան միամիտ ու մեզ ա'յնպիսի ոչխար կը
 կարծեն, ինչպէս ասկէ երեք հազար տարի առաջ:
 Կ'ուզեն որ ծնրազրենք իրենց պատկերին ինչպէս
 սուրբերու: Կը կարծեն թէ այնպիսի՝ հօտ մըն ենք,
 որու միակ ստեղծիչն ու իրաւարար տէրերը իրենք են:
 Հարցուցէք իրենց՝ առանց ամչնալու պիտի ըսեն թէ
 շնորհը որ ունին՝ Աստուծմէ է: (զգուանի) Է՛, թող
 Մովսէսի հէքեաթը իրենց պլուխն ուտէ: Հայոց համար
 ամենէն սարսափելին սպասելն է: Քանի կեանքը սահի
 մենք հօս կը ստոինք: Սպասել ինչի՞ . . .

ԽԱՉ. Եթէ հարցումը Չամալ բաշային է . . .

ՉԱՊ. Չամալ կամ միւսը նոյն բանն է: Նայեցէ՛ք,
 ասկէ եօթը տարի առաջ, Ֆրանսայի գիւղերէն մէկուն
 մէջ, մեր «մեծ» քաղաքագէտներէն մէկը, որուն ա-
 նունը՝ կրողը տանի որ չարասանեմ, յաղթականի
 բոլոր պատիւներով, երգ ու պար, դրօշակներ, պո-
 ռալ կանչել, վերջապէս վարչապետի վայելչութեամբ
 տարինք մեծ պանդոկ մը, ուր ուտել խմելէ վերջ, որ
 անուշ ոլլայ, արտասանեց աղուոր ճառ մը: Ըսաւ .
 «Թուրքերն այժմ կը լինեն եօթ միլիոն իսկ մենք,
 կը լինենք երեք միլիոն: Մենք տրանչալու ո՛չ մի
 պատճառ չունենք: Սրանից հինգ տարի վերջ, նրանք
 իրանց գէշ ծննդաբերութեան շնորհիւ ու քաղաքացիա-
 կան ներքին ջարդերով կը պակսեն ու կը մնան չորս
 ու կէս միլիոն, իսկ մենք հայերս, որ այժմ երեք
 միլիոն ենք, շնորհիւ մեր արտոյ աճման, նոյն հինգ
 տարիների ընթացքին կը հասնենք չորս ու կէս միլիոն-

նի»: Ուրեմն հաւասար ուժ պիտի ըլլայինք: Այն ատեն
 ես տասնութ տարեկան պատանի էի, խանդավառ, աչ-
 քերէս արցունք կու գար, լսելով Հայաստանի պետե-
 րէն մէկուն բերնէն նման սփոփիչ խօսք: Ըսի, ես խանդա-
 վառ պատանի էի, անզիտակ աշխարհի շնութիւննե-
 րուն, անոր համար խենդի պէս ծափահարեցի այս
 ահաւոր հայհոյութիւնը որ այդ մարդը իր բերնէն զուրս
 կուտար: Հիմա որ հինգի տեղ եօթ տարի անցեր է,
 կենանք զիմացը այդ պարտուած աներեսին և պոռանք՝
 դաւաճա՛ն, ո՞ւր է մարգարէութիւնդ: Ինչո՞ւ խաղացիր
 իմ խանդավառ պատանիի նուրբ սրտիս հետ: Ինչո՞ւ
 զիս մոլորեցուցիր սխալ ճամբայ ցոյց տալով, ինչո՞ւ
 թշնամին ահաւոր ցոյց չտուիր, միթէ մոռցա՞ր Ալեք-
 սանդրապոլի անպատիւ դաշնագիրը: Վա՛տ, թուրքը
 եօթ չէ տասնչորս միլիոն եղաւ իսկ մե՞նք: Թուրքը
 բանակ ունի, օդանաւ, զրահաւոր, թնդանօթ, իսկ
 մե՞նք . . .

ԽԱՉ. Կը սպասենք Մովսէսին [կը խնդայ]:

ՎԱՐ. Իսկ մենք ոջիւներ ունինք . . .

ՉԱՖ. Փոխանակ պարտեալի անպատիւ մուր քը-
 սելու, փոխանակ ինքզինքնին մոռացութեան տալու . . .

ՎԱՐ. Եկեր են այս անգամ մեզ բոլորովին կրա-
 կին տալու:

ԽԱՉ. Մարդիկը բաժնուէր են ու կը տի-
 րեն:

ՎԱՐ. Տեսա՛ր թէ կը քնանաս եղեր, պէտք է
 արթննաք և ձեր սիրտը մաքրէք թէ չէ կեանքերնիդ:

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ, ԱՆՏՈՆ, ԶԱՐՈՒՀԻ, ՍՈՒԼԹԱՆ

[վերջիններս կը վերադառնան հարսնիքէ մը, լաւ հաղուած եւ քնասի կերպարանք ունին]:

ԶԱՐՈՒՀԻ [մտնելով կ'անցնի ննջասենեակ], Պօն-
ժո՛ւր:

ԱՆՏՈՆ. [իր սարիքին համեմատ] Ո՛ւֆ... բարեւ ձեզ:
(կը նստի եկածին պէս):

ՍՈՒԼԹԱՆ. Օ՛ֆֆ մէրիկս, առ ինչ բան է, անոնց
հարսնիքն ալ իրենք ալ: (ոտքը ցաւովի պէս ննջասե-
նակ կ'երթայ):

ԱՆՏՈՆ. Դուք որ երթայիք և մարդս պէրայի չը
խոթէիք:

ՎԱՐ. Ի՞նչո՞ւ:

ԽԱՉ. Ես գայը դժուար է:

ԱՆՏՈՆ. Ես՛, Զաքա՛ր, տեսար մարդը:

ԶԱՔ. Հա՛:

ԱՆՏՈՆ. Ի՞նչ ըսաւ:

ԶԱՔ. Դեռ վերջնականապէս հաշիւ չէ ըրած:

ԱՆՏ. Վայ պապանդն ճանդնա... Ծօ մեր բարայոյ՛վ
մասխարս եղանք:

ԶԱՔ. Ղազարը եկաւ:

ԱՆՏ. Է՛:

ԶԱՔ. Կը հարցնէ մեր տունին երբ սկսիլը:

ԱՆՏ. Իրե՛ն ինչ:

ԽԱՉ. Դրացի ըլլալ կ'ուզէ:

ԱՆՏ. Պոլսեակի դրացի ունենալէն, ֆրանսացին
աւելի լա է:

ԶԱՐՈՒՀԻ. Զաքա՛ր:

ԶԱՔ. Հա՛, ի՞նչ կայ,

ԶԱՐՈՒՀԻ. Եկո՞ւր:

ԶԱՔ. Դուն եկուր:

ԶԱՐՈՒՀԻ. (զալով) Հայրիկ վերաբերուդ, գլխարկդ

հանէիր:

ԱՆՏ. ([երարկուն զալով]) Գլխարկիս մի դպիր:

ՎԱՐ. Գլխարկին մի դպիր...:

ԱՆՏ. (ընդմիջ) Դուն քու բանիդ խստնուէ...:

ՍՈՒԼԹԱՆ. [սնական հագուստ] Վարդա՛ն, Զաքա՛ր,
Իրիկունը ուտելու բան կա՞յ: (իրար երես կը նային)
Սըւոնց նայեցէք, ամբողջ օրը տունը նստած լեզու կը
ջարդեն, ես որ նոր տուն կուգամ ինձմէ ուտելիք պի-
տի ուզեն:

ԽԱՉ. Գացած տեղերնուդ հիմակու ուտելիքն ալ
չկրցա՞ք բերել:

ԱՆՏՈՆ. Ասոնց չէ, մարդը քստսուն գեղի շունե-
րուն աւելու հաց էր հանած:

ՎԱՐ. Կեցած տեղերնիս առ քիզի շուն եղանք:

ԽԱՉ. Մարդ շատ կա՞ր:

ՍՈՒԼԹԱՆ. Լեցուն: Անան ատ ի՞նչ մասրաժ էր
ըրեր, առ ի՞նչ հագուստներ, ի՞նչ մասնիներ, ի՞նչ
օղեր... Է՛, ալ ի՞նչ ըսեմ որ ըրած չըլլայ: Էֆերիս աը-
ղայ, ըսէ: Երեսը որ նայիս, ճիշ բան չէ կ'ըսես: Աման
ան ի՞նչ թխրչիւ - ճեշիս իջկիներ, ան ինչ յաքարներ...
ՎԱՐ. Սրահը մե՞ծ էր:

ԶԱՐՈՒՀԻ. Շատ կոկիլ, մօտ հարկը յիսուն հոգի
մը կար:

ԽԱՉ. Պաւո՛:

ԶԱՔ. Եթէ մարդ գլուխ քսան ֆրանքի ծախք մը

եղաւ, ա՛ն քեզի հինգ հազար ֆրանք:

ԱՆՏՈՆ. Ի՞նչ կայ որ:

ԶԱՔ. Ոչինչ: Ուտող խմողին անուշ: Ոչինչ, բայց այդ տղան հինգ հազարը հինգ ամիսէն կը շահի:

ԶԱՐՈՒՀԻ. (Ետ գալով, Զաւարի մագերուն հետ խաղալով) Զա՛ր քեզի, ինչո՞ւ չեկար, հէ՞: (Վարդանին), Վարդա՛ն պիտիկերս շինեցի՞ր:

ՎԱՐ. Այո՛: Հապա դուն ըսածս ըրի՞ր:

ԶԱՐ. Այո՛: Խաչիկ ո՞ւր է Մարիամը:

ԽԱԶ. Ծախեցի:

ՍՈՒԼԹԱՆ. Քեզմէ գէշի՞ն:

ԶԱՐ. Մայրի՛կ, ի՞նչ պիտի եփենք:

ՍՈՒԼ. Երկանդ գլուխը ջարդի որ լաւ բացայ մը ուտենք: Վարդա՛ն, նշանածիդ չգացիր: Զարուհի աղջիկս, դուն ալ կրակը վառէ և բաթաթէս բեր որ կեղւեմ:

ՎԱՐ. Ո՛չ: Իրիկունը պիտի երթամ

ԶԱՐ. Աղէկ: [կ'երբայ ու կը վերադառնայ գետնախնձորի ամանով և զանակ, նորէն կ'երբայ]:

ՍՈՒԼ. Խաչի՛կ, ո՞ւր է Մարիամը:

ԽԱԶ. Հիմա պիտի գայ: Իրիկունն մենք ժողով ունինք, ան տունը մինակ պիտի չմնայ անշուշտ:

ԱՆՏՈՆ. Ի՞նչ ժողով:

ՎԱՐ. Բողոքական:

ԱՆՏՈՆ. Հը, հիմա նոր գտանք շիտակ ճամբան:

Սը: ոնց պիտիմին նայէ մէյ մը:

ԽԱԶ. Եղածը հինգաւ գնաց:

ԱՆՏՈՆ, Հայտե ետրոււմ, պապդ ալ քեզի պէս գորք գորք կը նետեր. բայց ինքն իր կրակով այրե-

ցաւ...

ԽԱԶ. Պապաւ գոնէ ինքն իր կրակով է այրեր, հապա դո՞ւ, դուն որո՞ւն այրեցիր:

ՍՈՒԼ. Է՛, մա՛րդ, նորէն մի սկսիք:

ԱՆՏ. Կնի՛կ, դու քու բարաքեսդ ջարդէ:

ՍՈՒԼ. Դուն ալ չու բարաքեսդ ջարդէ, ի՛նչ, գըլխուս զարքիս կտրեցար:

ԶԱՐ. Մայրի՛կ, կրակին վրայ ջուր գնե՞մ:

ՍՈՒԼ. Հա՛: Էփեցի՞նքը... Զարո՞ւ, ջուրին աղ նետէ: (Զարուհի խմանայ կ'երբայ):

ԽԱԶ. Բայց, հայրի՛կ, ինչ որ ալ ըլլայ, այս ընթացքով անոնք իրենց դերեղմանը կը փորեն:

ԱՆՏ. Ծօ, ետրոււմ, թէ որ տղան իր հօրը երկու կանգուն հողը շատ կը տեսնէ...

ԶԱՔ. Երբ հայրն անարժան է, հող չէ, երկու կանգուն շոտ չեմ տար:

ԱՆՏ. Աստուած քու օրիդ չթողու: Ասարը Բրիստոսի բանն է, հայրը տղուն հազար է տուեր, տղան հօրը դերեղմանը շատ կը տեսնէ:

ԶԱՔ. Յետո՞յ:

ԱՆՏ. Զրիչընիմի ֆոֆը: Երբ հայրն իր գլխէ ելած տղուն ռաքէն բռնած՝ շան պէս դուրս չի նետեր, թող տղան ձանձուն կտրած ո... գետին քսէ:

ՎԱՐ. Հարկա՛ւ, հարկա՛ւ...

ԱՆՏ. Սը: ոնց նայէ մէյ մը, երեկ աչքը բացող լակտը ելեր ինծի...

ԶԱՔ. Հօրեղբայր, տեղդ եթէ ուրիշ մ'ըլլար...

ԱՆՏ. Կասու՞ն [խնդով ակառներու սակեմ] երբ միտին չէ հասեր, օրը ուրբաթ է ըսեր:

ԶԱՔ. Վնաս չունի բայց, բան մը որ կայ, եմ աւելի երիտասարդ եմ քեզմէ, և աւելի հա առք ունիս

այդ միտին հասնելու քան թէ դուն:

ԱՆՏ. (ընդմիջ.) Ուղտին ըսեր են. Տեղի աղա, վե՞ր ելլել լաւ է, թէ վար իջնել: [խնդու՛մ ակուաներու մեջն]: Հը՛, ըսեր է, յիտակ ճամբան աչքը կը հանէ: Ծօ՛, գլուխդ քարէ քար զարնելու ի՞նչ պէտք ունիս: Տարիներով հաւկիթ ածող հաւը, տարիներով թուխս նստող հաւը կեցած տեղը, ելլել խորոզ մը բերել հաւկիթին վրայ [նոյն խնդու՛մ]:

ԶԱՔ. (ընդմիջ.) Հօրեղբայր, քու ամէն տարուան թուխս նստող հաւն այս տարի հաւկիթները կը հոտեցնէ, ճրչիս կը հանէ: Այն հաւը, որ իր կերած կուտին արժէքով հաւկիթ չածեր, գլուխը կը կտրեն:

ԱՆՏ. Թէ որ խօսքով ապուր եփի, ես այ տեղիս կլլեմ:

ԶԱՔ. Օրէ՛նք է, հա՞, հայրը որդւոյն կրնայ գուրս ընել իսկ երբ հայրն է անառակուողը... ես այդ օրէնքին...

ՍՈՒԼ. Ելիր նայինք, ինծի հօրեղբորդ կոնակը կապած դուրս նետէ [խնդու՛մ]:

ԱՆՏ. է՛... (լռութ.) կը վախցուի: Հիմակուան փիճերը...

ԶԱՔ. Հիմակուան փիճերը երէկի հարազատներէն տարբերութիւն չունին: Եթէ հարկ է վտարել հայրը, ընտանիքը անպատուութենէ ազատելու համար...

ԱՆՏ. [ընդմիջ.] Ծօ՛, Ձաքա՛ր, անպատու մարդը հա՛ր մա՛ր չի կրնար ըլլալ:

ՎԱՐ. Հալրի՛կ, այդ կ'ըսես որովհետեւ հայր ես և կը կարծես ամէն մարդ քեզի պէս հայր կ'ըլլայ:

ԱՆՏ. Էջը-էջուն քով որ կապես ես առեմ կ'առնէ ես մտեմ:

ԽԱԶ. Բայց, աներպապա, չհասկցար Ձաքարին

ըսել ուղածը:

ԱՆՏ. Դուն ըսէ նայինք, հասկցո՛ղ եփեցի:

ԽԱԶ. Աներպապա, Ձաքարը ըսել կ'ուզէ. ենթադրէ թէ մէջտեղ հայր մը կայ, որ մոռնալով իր հայրական կոչումը, սկսած է բողբոռ ետեւէ իյնալ, տընեցիները նախատել, տան կահ կարասին ծախելով օղիի կուտայ և շահածը շուներուն կը կերցնէ: Արդ, իր չափահաս որդին տեսնելով հօրը հակամարդկային ընտանիքի պատիւը մեռցնող ընթացքը, կուզէ գինք շիտակ ճամբու կոչել: Իսկ անբարոյականացող հայրը, ելեր տակաւին հայրութեան անունէ կը խօսի:

ԱՆՏ. Էփեղիմ, աղէկ գտար:

ՎԱՐ. Ձէ երկինքէն ինկող մանանայ է, ի՛նչ ըլլայ թող կլլեն:

ԶԱՔ. Հօրեղբայր, պարապ տեղ թշնամական դիրք մի բռնեք, մինչև այսօր այնչափ շատ ենք խաբուեր, որ այսույիտ լոնել ամօթ է տեսածը չհասկնալ ու չպոռալ էջութիւն է, իր խղճին վրայ քար դնել հայրականութիւն է: Ի՛նչ, կը կարծես թէ մենք այնքան ապուշ էինք, որ մեր երիտասարդի կեանքը երգ ու պարով, գուարճալի խնջոյքներու աղմկայոյզ ինքնամոռացման մէջ չէինք կրնար ապրիլ անհող, հոգեկան տառապանքներէ ազատ, պարտէզներու կանանչ խոտերուն վրայ, ծառերու շուքին, գինով բնութեան հարստութենէն, չէինք կրնար հանգիստ քուս քաշել: Հէ՞, ի՞նչ էր մեր տեսքը, գիշեր ցորեկ, աշխատութեան ատեն թէ հանգիստի, շարունակ մտածե՛լ, մտածե՛լ, մտածե՛լ...

ԱՆՏ. Տղաս դուն երեկի լակոսն ես, ես քառսուն տարի է կը մտմտամ ու օր մ'օրանց ձանձուն չեմ հաներ, Հը՛, երեկ մէկ այսօր երկու իրար էք անցած, կարծես վզերնուդ բնո դրած ըլլային:

ՎԱՐ. Հայրի՛կ: (Սուլբան խոհանոց կ'երթայ ուրիշ
ես կուգայ Ձարունի):

ԱՆՏ. Ի՞նչ է «հայրիկ»:

ՎԱՐ. Գլո՞ւխդ կը ցաւի:

ԱՆՏ. Ի՞նչ է տղաս, քեզի ի՞նչ եղաւ:

ՎԱՐ. (հասիկ հասիկ) Գիտե՞ս ինձի ինչ եղաւ, եթէ
այս տղան հայհոյէ իրաւունք ունի:

ԱՆՏ. [բարկացած] Ծ՛օ շան լակոտ, դուն սահա երե-
կի լակոտն ես, ինչէ՞ն ինչ գիտես որ ճերմակ մազերուս
հետ կը խաղաս...

ՎԱՐ. Մի՛ պոռար ,երէկի լակոտն այսօր շուն կ'ըլ-
լայ: Իսկ ճերմակ մազերը... Այդ ճերմակ մազերու տակ
պահուող մարդիքը կը քալեն, կը կոխկռտեն սիրտեր:
Այդ ճերմակ մազերը հեծեր են մեր վրայ ու մեզ էշու-
տեղ քշելով մինչև հոս են բերեր...

ԱՆՏ. Ծ՛օ՛, ի՞նչ տուեր ես որ ետ կ'ուզես:

ՎԱՐ. Ի՞նչ տուի, ի՞նչ տուի, հապա քու քառսուն
տարուան տուածդ: Հապա իմ բոշայի անու՞նս: Գի-
տե՞ս ինչ ըսել է ազգութիւն չունենալ... գիտ՞՞ս որոնք
են ճերմակ մազերը պատնէշ բռնողները... (Ձ. ցոյց
սալով) հայրիկ այս տղան իր բոլոր ունեցածն է տուեր:
Այս տղան յոյսերու վրայ, աւագի վրայ տուն է շի-
նք: Այս տղան իր երիտասարդի լաւագոյն տարիները
սիրունի խաղցնելու տեղ Դաշնակցական գաղափարներն
է քարոզեր: Եթէ այս տղան կուսակցական չըլլար,
եթէ հայրենասէր ըլլալու տեղ նիւթապաշտ հրեայ մը
ըլլար, որմէ՞ գէշ, տուն և խանութ չէր ունենար: Վա-
ղը ասիկա ալ դուրս կ'ընան, միայն այն պատճառաւ
որ ձեռք ոտք լզել չի գիտեր, իրենց ազտոտութեան
աչք չի կրնար փակել: Հայրիկ, այս տղուն պէսները

Դաշնակցութեան մէյմէկ ջարեր են, ասոնք իրենց լա-
ւագոյն տարիները...

ԱՆՏ. Է՛, է՛, անոնք ալ իրենց կեանքն են...

ՎԱՐ. [ընդմիջ.] Անոնք ծնելին սխալ են ըրեր և
այնուչետ անկումէ անկում են գացեր: Հայրիկ, այս
տղան անփորձ էր, մաքուր, խանդավառ շուտով հա-
ւատաց, իսկ դուն ճերմակ մազ ունիս, դուն պատաս-
խանատու ես ասոր առջև, դուն մինչ օրս անոնց ինչ
ծառի պտուղ ըլլալը գիտնալու էիր, խաբուեր ես և
ալ պէտք չէ որ խաբուիս...

ԱՆՏ. Սո՛ւս ծօ շան լակոտ սո՛ւս:

ՎԱՐ. (լուռ եւ պաղ նայելի վերջ) Ինչո՞ւ կը խու-
սափիս ճշմարտութիւնը լսելէ: Եուն ըլլալս փնաս չունի,
եթէ գողը տունդ մտնէ քեզ օգնութեան կը հասնիմ:
Քու տարիքիդ մարդիկը այնքան ապիկար են եղեր...

ԱՆՏ. (արագ ապսակ մը կը զարնէ) Կորսուէ՛, ծօ՛
ապուշ...

ՁԱՐ. Ա՛, (կը վագի վարդանին առջեւ կ'անցնի,
Վարդան կարմրած պաղ պաղ հօրք երեսը կը նայի,
միւսները տղուն հետ են):

ՍՈՒԼ. (դուրս վազելով) Ո՛յ... Ի՞նչ եղաւ:

ՁԱՐ. Ոչի՛նչ, ոչի՛նչ, բան չկայ, ասեղը ձեռքս
մտաւ:

ՍՈՒԼ. Աչքդ չելլէ, սիրտս դող հանեցիր, նայի՛մ...

ՁԱՐ. Բան չկայ, անցաւ...

ՍՈՒԼ. Քա՛ մեղայ, սիրտս դող ելաւ, գիտես քի
իրար զարկին (խոհանոց կ'երթայ):

ՎԱՐ. Հատ մըն ալ հայրիկ... Երիտակ խօսողին
վարձքը այս է:

ՁԱՐ. Վարդանի՛կ, եկո՛ւր պիսիկդքս ցոյց տուր:

(զայն Բաժնեւոր զուրս կը սահի):

ԽԱԶ. [Լուրբեհե վերջ] Վերջապէս լաւ բան չէ:

ԱՆՏ. Տղայ աղէկ գէշ ի՞նչ բան է: Մարդիք օրէնքի վրայ ընտրուեալ են, մինչև ընտրած տեղերնին երթալու են:

ԽԱԶ. Իրաւունք ունիս բայց անոնց ընտրած ժողովի կէտը պարտէզներու խրտուիլակի պէս բան մըն են եղած: Եթէ անոնք Քրիստափորի հարազատ թողներն ըլլային, մեզ հոս բերող, կարսի և Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագրի տէրերը մեր գլուխը չէին հաներ:

ԱՆՏ. Հոպս մինչև հիմա ո՞ւր էիք:


ՁՍԲ. Հօրեղբայր, պարտաւ տեղ Վարդանը վշտացուցիր: Անիկա ա՛յնքան շիտակ և սրտէ կը խօսի, որ ետ անոր տուջև ամօթ զգալով գլուխս կը ծռեմ: Ինչո՞ւ ըլլանք այնքան յամառ որ չւզենք շատակ կոտորը լսել: Վարդանին ըսածը, քեզի պէս պատուական հայրերու ազնիւ հաւատքը չարաչար գործածող մարդիքը մեր ընտանիքէն վճռուելու՝ մեզ մաքուր պահելէ դատ ուրիշ բան չէ: Քեզի պէս շատ մը հայրեր կան, մաքուր սրտով ու անկեղծ հաւատքով, որ չեն ուզեր հաւատալ թէ՛ Անդրանիկ, Մուրաա ծնող մայրերը, Քրիստափոր, Ջաւարեան հասցնող հայ տղաները կրնան նաև հրէշներ ծնիլ: Քիչ մը ճի՛գ ըրէ լաւը գէշէն զստագանելու, այն ատեն, հաւատայ խօսքիս, պիտի տեսնես թէ մենք քու կարծածիդ չափ ցած հոգի չենք և եթէ այսպէս մէջտեղը կ'աղմկենք, ուրիշ կերպ չենք կրնար միամտութեամբ հաւատալ: Եղած պատկերը ա՛յնքան է սարսափելի որ եթէ մէկզի ընես գլուխ ծռելու սա հին մոլութիւնը, դուն ալ մեզի պէս

պիտի սարսուս անցեալին վրայ, պիտի տրտմիս ներկային ու սարսափիս ապագային համար:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ



Տեսարանը կը ներկայացնէ Չափարի յարկաբաժինը: Կը բաղկանայ երեք մասերէ: Մուսֆի դուռը դիմացէն: Պատահան դուռն աջ կողմը, որովհետեւ քիչ աւելի աջ ննջաստեղ-տակ: Զախ կողմը խոհանոցն է: Կահաւորու՛մ բաւական մասնոր ու ճաշակաւոր բայց գործաւոր դասի յասուկ: Ճաշարան մըն է բերը իր բոլոր կազմով: Ծաղիկներ սեղանին վրայ: Պատերու վրայ կան Բրիտանիոյի, Անգ-րանիկի եւ ընտանեկան մեծադիր նկարներ: Դարակ մը գիրքեր:

ՏԵՍԻԼ Ա.

ՉԱՔԱՐ ԵՒ ՉԱՐՈՒՀԻ

ՉԱՐ. (կօշիկ կը ներկէ, մագերը դեմքին վրայէն անդին ըրած ասեմ դեմքն ալ կը սեւցնէ, նայելով ներ-

կած կօշիկի փայլին) Ո՛ւ ս՛ւ:

ՉԱՔ. [սեղանի առջեւ խոտոր գրքի մը վրայ ձուած, երկու ձեռքով գլուխը բռնած, շատ խորատուգում կը կարգայ] Հը՛:

ՉԱՐ. (ցոյց տալով) Նայէ՛:

ՉԱՔ. (անտարժ) Ի՞նչը:

ՉԱՐ. Նայէ՛, ինչ աղուոր կը փայլի:

ՉԱՔ. [կը նայի կօշիկին յետոյ աղուոր ժպիտով մը երեսի սեւին] Երեսդ աւելի կը փայլի քան կօշիկը:

ՉԱՐ. Իրա՞ւ: Մերսի: [Ժողովելով բոլորը խոհանոց կը սանի, խոհանոցէն] Չաքա՛ր:

ՉԱՔ. [անտարժ] Հը՛:

ՉԱՐ. Ո՛ւՖ: [չարաննի ծամածռութիւնով մը կուգայ անոր գլուխը գրկած գիրքէն ետ առնելով] Իմ անունս «հը՞» է:

ՉԱՔ. Քա չա՛ր, հանգիստ կեցիր:

ՉԱՐ. Հիմա քեզի խեղդե՞մ: Իմ անունս «հը՞» է:

ՉԱՔ. «Հը» չէ, հապա ի՞նչ է:

ՉԱՐ. Դուն ըսէ:

ՉԱՔ. (կամաց կամաց սարուելով) Չէ դուն ըսէ:

ՉԱՐ. [ականջին անլսելի ձայնով մը]:

ՉԱՔ. Օ՛հօ՛, հիմա ալ ծանրացար, հին թիթեռնի-

կը չես մնացած:

ՉԱՐ. Ը՛ն, ը՛ն, ես ալ կուլամ:

ՉԱՔ. Ամօթ է, մարդ կուգայ:

ՉԱՐ. Ի՞նչ կայ որ:

ՉԱՔ. Քա երեսդ մուր է:

ՉԱՐ. Չէ՛: [ձեռքը գաւնելով] Ո՛յ (խոհանոց կը վազէ):

ՉԱՔ. [սրտմտքեամբ գիրքը կը փակէ ու պահ մը պաղ ակնարկով անոր վրայի գիրքերուն նայելէ վերջ կը

սանի դարակը, ննջասենեակ կ'երբայ եւ անկէ] **Զարո՞ւ:**

ԶԱՐ. [խոհանոցէն] **Հը՛:**

ԶԱՔ. **Օձիքնեքս ո՞ւր են:**

ԶԱՐ. **Մահճակալին տակը:** [վայրկեան մը ետք Զա-
ֆար ետ կուգայ օձիքը անցընելով]:

ԶԱՔ. **Զարո՞ւ:**

ԶԱՐ. (դեմ գալով) **Ո՞ւր կ'երթաս:**

ԶԱՔ. **Մինչեւ Խաչիկին, հիմա կուգամ:**

ԶԱՐ. (սուտ լացով ծամածռութ.) **Ը՛ն ը՛ն ը՛ն:**

ԶԱՔ. **Քսան վայրկեանէն կուգամ:**

ԶԱՐ. (սպառնալով.) **Եթէ ուշանաս ես ալ կը
պառկիմ:**

ԶԱՔ. **Է՞, կը պառկե՞ս, ցորեկո՞վ:**

ԶԱՐ. (զլխով ալո):

ԶԱՔ. **Եթէ եկող մ'ըլլայ:**

ԶԱՐ. **Հիւանդ եմ կ'ըսեմ:**

ԶԱՔ. **Հիմա, Խաչիկին ձայն տամ, միասին հոս
կուգանք վերջը հօրեղբոր տունը կ'երթանք, հա՛:**

ԶԱՐ. **Ուի:**

ԶԱՔ. **Ա դուդա՛ս չ'կոտ:**

ԶԱՐ. **Ուի՛:** [Զարուհի բան մը մոռցողի պես կը
վազէ խոհանոց եւ պնակներու տեղադրման ձայներ հա-
նելով կ'երգէ շատ ոգեւորութեամբ ու նոյն ասեմ կ'առ-
խասէ: Քիչ մը վերջ Միլնաս մտած է դուռը ծեծել, ու
պատասխան չստանալով հանդերձ բերանաբաց մտիկ կ'ընէ:
Միլնաս Ա. արարի արագն ունի]:

Պաղ աղբիւրին մօտ

Կանգնած հայ աղջիկ,

Սափորը ուսին՝

Ինքն էր գեղեցիկ.

Առաւօտուն թոնիր վառ

Ես մայել եմ քեզ համար:

Նման ես կարմիր խնձոր լորիկ,

Լորիկ լորիկ, ջանքմ լորիկ:

Պաղ աղբիւրին մօտ

Կանգնած հայ աղայ,

Հրացանը ուսին՝

Ինքն էր քաջ ճշտակայ:

Առաւօտուն թոնիր վառ

Ես մայել եմ քեզ համար:

Նման ես կարմիր խնձոր լորիկ

[Բեմ կուգայ ձեռքը արելով] **Ա՛** [ա ի ի բերան կը նայի
Միլնասին]:

ՏԵՍԻԼ Բ.

ԶԱՐՈՒՀԻ ԵՒ ՄԻՆԱՍ

ՄԻՆ. **Ա՛խ, ի՞նչ անուշ կ'երգէիր:**

ԶԱՐ. [նեղմանք եւ բոլոր պատասխանները]: **Հը՛:**

ՄԻՆ. Պիտի ուզէի ամբողջ կեանքս անցընել քեզ
մտիկ ընելով:

ԶԱՐ. **Հը՛:**

ՄԻՆ. **Հաւաստ վկայ, կարծես բարձր լիններու
մէջ, մնաւոր ծառի մը մէջ կրեքացող ճիւղին վրայ,
անձանօթ թռչուն մ'անդին, իր հպարտ գլուխը ցցած
վեր՝ դէպի ամպերն անհուն, կը գմայլի բնութեան
հարուստ գանձին ի տես, ու կարծես ինքն իսկ մեծ
աստուածութիւն՝ մը կը դիտէ բարձրէն, անհուն և...**

ԶԱՐ. **Է՛, Է՛, վերջը:**

ՄԻՆ. Քու ձայնդ աստուածատուր է, քու մարմինդ
հրեշտակային, քու աչքերդ մարգարիտ, քու հոգիդ...

ԶԱՐ. **Իրա՞ն: Վերջը՞:**

Մին. Պիտի ուզէի որ այդ անբաժանելի ամբողջութենէդ, այդ հրաշալի աստուածութենէդ, ոտքիդ տակը միայն զնէիք գլխուս վրայ ու զիս այնպէս քու ստրուկդ ընէիր: Այդ բաւ կ'ըլլար ինծի պէս ողորմելի շունի մը: Այդ ոտքէն պիտի զգայի ելեքարական գօրութեան պէս մարմնիդ քնացնող ջերմութիւնը, որ մտնելով գլխէս պիտի տաքցնէր էութիւնս, հոգիս, սիրտս:

ՉԱՐ. Ինծի կրնաս ըսել, թէ այդ օձի թունաւոր լեզուն ուրկէ գողցար:

Մին. Օ՛, այդ ոչինչ: Մեղայ ըսէ, մեղայ ըսէ, ես Աստուծոյ ծառան՝ գողնայ, ա՛՛ ոչ: Այդ լեզուն հօրս անգին պարզէն է: Ատիկա անանկ գանձ մըն է որով օձը ծակէն դուրս կու գայ ու կ'ունկնդրէ զիս: Այդ լեզուն ուղակի հրաշալիք մըն է որով կրնամ մարմնիդ ամենափոքր շարժումը նկարել:

ՉԱՐ. Առանց ակնոցի:

Մին. Նոյնիսկ աչքերս փակ:

ՉԱՐ. Ուրեմն հրէջ մըն ես...

Մին. Կամ հակառակը: Աստուած իր անմեղ ծառաներուն, հաւատքի մշակներուն, անոնց որ կրնան իր պարզւել շահագործել, տուած է անոնց նմա՛՛ հրաշալի շնորհներ որ գաղտնի է եօթ վարագոյրով հեթանոս ամբարիշտներուն: Իմ գանձս անգին է: Կ'ուզե՞ս որ քեզ բաց նկարեմ թէ ինչպէս երեկ իրիկուն, ժամը իննուկէսին, դուն անցած հայելիին դէմ, քու մերկ մարմնիդ զմայլեցար ինչպէս Աստուած իր փառքին:

ՉԱՐ. Վա՛տ:

Մին. Այն ատեն, երբ կը վախնաս մարմնի մերկութենէն, մերկացնում հոգիդ, սիրտդ, որ այնքան աղուոր են ու պաշտելի: Ըսեմ օրինակ՝ թէ ինչպէս

ասկէ առաջ երբ Յունաստան էիր...

ՉԱՐ. Պիտի լռե՞ս:

Մին. Այն ատեն թոյլ պիտի տա՞ս որ վառուած շրթներս հպին ոտքերուդ ինչպէս մանուկը մօր ծծին: (Ճնրադիր քանի կը մօտենայ Զարուհիի, վերջինս կը հեռանայ):

ՉԱՐ. (լախցում) Սո որին արարած...

Մին. Ստորին գուցէ առ երևոյթ, բայց հոգիս այնքան մեծ և շքեղ է, հոն այնպիսի պալատներ կան շինուած նուրբ հաշակի վրայ: Սոնարհ այ՛ո՛: Փրկիչս արքայութիւնը ընծայեց խոնարհներուն, ու ե՛ս, ո՛վ ծառերու վրայ ոստոստող թիթեռնիկ, ծոցիդ արքայութեան վառարան ու անմահութեան պտուղ՝ խնձորներուն համեմուտ միայն ոչխարի խոնարհութիւն ու գառան հեզութեան վրայ եմ կոթնած...

ՉԱՐ. Զղուելի՛ արարած:

Մին. Գիտեմ հպարտ ես, մեծ հոգի մեծ սիրտ ունիս: Գու ամենէն չար լեզուդ մեղրի պէս է: Գու նախատինքը աղօթք: Ի՞նչ կ'ուզեմ: Դուն պզտիկ, խեղճ ու ողորմելի շուն մ'ունիս որու փափուկ մորթը երեսիդ քսել հաճոյք է քեզի: Ասոր անարժան եմ... գիտեմ. հպարտ ես, և անողորմ: Քանի անարժան եմ բարիքի, ըրէ չարիք մը ինծի որ ձեռքիդ յաւիտեան երախտապարտ մնամ:

ՉԱՐ. Կ'ուզես որ մազերէդ բռնած՝ շան պէս դուրս նետեմ:

Մին. Ո՛չ: (չար ժպիտ) Ատիկա շուտով կը մոռցուի: Կ'ուզեմ որ սա ձախ աչքս հանես:

ՉԱՐ. Միայն ձա՞խար:

Մին. Այո՛, ձախը, սա ձախը, որ շատ անգամ դժբան ճեղքէն տեսնը է մարմինդ գեղեցիկ, արձանի պէս

ձերմակ, կաթի պէս անուշ, տեսեր է երկու ափերու մէջ երկու հաւկիթի պէս աղուոր ծիծեր, տեսեր է զոյգ մը աղբիւրի պէս հոսող աչքեր որ մարմնի ամէն կողմէն կը հոսի...

ՉԱՐ. Եւ կ'ուզես որ հանեմ այդ դռան ձեղքէն նայող մարմնի դաւաճան աչքերը:

ՄԻՆ. Հանէ՛ այն աչքը որ զիս գայթակղեցուց:

ՉԱՐ. Մարմին մը որ չի կրնար իշխել իր անդամին ու կը գայթակղի:

ՄԻՆ. Ճշմարիտ է:

ՉԱՐ. Գիտե՞ս ինչ ընելու է այդ մարմինը:

ՄԻՆ. Կիրքը կը յաղթէ մարմնին:

ՉԱՐ. Գիտե՞ս, ինչ ընելու է այդ կիրքէն յաղթւող անպէտ մարմինը:

ՄԻՆ. Կարտել, փշրել, մեռցնել:

ՉԱՐ. Ո՛չ:

ՄԻՆ. Ըսածդ աստուածային հրաման ըլլայ:

ՉԱՐ. Այն անպիտան, թոյլ հոգին որ կը յաղթուի կիրքէն ու կը թունաւորէ իր ամբողջ մարմինը, այդ հոգիին վրայ թքնել ու խոզերուն սուջև նետելու է [լեցուն բերան կը բքնէ ու անջատեցնակ փայսջելու ասեմ]: Աղտո՛տ, պի՛ղծ շուն, եթէ շուտով զուրս չելլես հիմա կուգայ... (անջատեցնակին դուռը ետեւէն կը գոցուի):

ՄԻՆ. (անակնկալի եկած ապեահար ետեւէն նայելի վերջ, ձեռքով երեսի բուրբ սրբելով երկար երկար կը նայի բուրբն ու զլուխը կախ վիճակի մէջ կը մնայ):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊՍՏՈՒԵԼԻ

ՊՍՏՈՒԵԼԻ. (դուռը կը զարնէ բայց ձայն չառնելով

հանդերձ կը մտնէ: Գլուխը կախ, նիհար մարմնով, ոսկեգոծ աւեսարանը ձեռքին) Բարև ձեզ: (ձայն չառնելով զլուխը կը բարձրացնէ, տեսնելով Մինասը): Աստուծոյ հոգին վրագ, ա՛յ սուրբ մարդ, ի՞նչ բանի ես հոս:

ՄԻՆ. Կ'աղօթէի:

ՊՍՏ. Աստուած ձայնդ լսէ (կը ծնրադրէ):

ՄԻՆ. (անջատեցնակին նայելով) Ամէն (լուռփիւն):

Ո՛ւրիշ կուգաս:

ՊՍՏ. Մոլորուած դառներու փնտռուքէն:

ՄԻՆ. [միտք դրան] Փրկիչս ներէ հեթանոսներուն:

ՊՍՏ. Պէտք է ճամբու գան:

ՄԻՆ. [դրան] Թէ ոչ Աստուծոյ կրակը վրագ:

ՊՍՏ. Օ՛, Աստուծոյ կրակը:

ՊՍՏ. Եղբայր Մինաս:

ՄԻՆ. Աստուծո՛վ:

ՊՍՏ. Դուն արքայութեան արժանի ես:

ՄԻՆ. [դրան] Աստուած ձայնդ լսէ:

ՊՍՏ. Ներէ՛, Տէ՛ր, եթէ անունդ պարապ տեղ բերանս կ'առնեմ:

ՄԻՆ. [դրան] Գրնա՞մ ապրիլ առանց վայրկեան մը, անունդ յիշելու: Կրնա՞մ երերալ եթէ հոգևոյդ ամբողջ քնքուշութեամբ չբռնես ձեռքէս ու քու ներկայի հուրով զիս չբռնկեցնես...

ՊՍՏ. Տո՛ւր, Տէ՛ր. փառքէդ փոշի մը սուր որ ես ալ ըլլամ կատարեալ...

ՄԻՆ. [ձեռքերը դեպի դուռ արածելով] Ո՛վ Աբրահամին և Իսահակին բարի Աստուածը, ո՛վ Մովսէսին և Ահարոնին հարուստ Աստուածը, ձայնս լսէ՛, ես շա-

տերուն պէս քու փառքդ ասեղի ծակէն չեմ զիտեր: Ամէն անգամ որ զլիխս մէջ ծաղի արևդ հարուստ ու անոր սլացող ճառագայթները խուժելով միտնուին հողիս ասնը, ամէն անգամ որ քու լուսնի խորհրդաւոր կիսադէմք կուգայ գանկիս զաբնուիլ, ամէն անգամ որ երկու աստղերէ ծնունդ՝ աչքերդ կուգան մեռած աչքերուս դէմ, մարմինս հրդեհի կուտաս ու կը վառի, կը վառի, գլուխս կը մխայ, աչքերս կը մթազնի, խելքս իր ընթացքը կը կորսնցնէ ու ուղեկորոյս օդանաւի մը պէս թաւալգլոր կ'իյնամ վար, դէպի անդունդ... փրկի՛չ, ձայնս կը լսե՞ս, իմ հաւատքը մաքուր է, սրտաբուխ, հաւատքս հողիս կէսն է...

ՊԱՏ. Ա՛խ փրկիչ. ա՛խ, փրկիչ...

Մին. Եթէ ուզէիր, ո՛վ Երուսաղէմի աղջիկ, քու բերնիդ մէկ աւելցուկ ծախտով, ոտքիդ մէկ հպումով, հողիս արքայութիւն զրկել, քեզմէ ի՞նչ կը պակսէր...:

ՊԱՏ. Ա՛խ, փրկիչ...

Մին. Ա՛հ ո՛չ, չե՞ս ուզեր ինկած մը վերցնել, չե՞ս ուզեր քեզ պաշտող հպատակ մը տունդ հիւրասիրել... Եթէ գիտնայիր թէ որքան կը պաշտեմ քեզ, այնպէ՛ս կը զգամ թէ, երազիս մէջ, երբ արիւնս անունդ կանչելէն յոգնի ու քու ջերմութիւնդ աչքերս թմբեցնէ, այն ատեն դուն պիտի գաս կամաց, թեթև քայլերով, գրեթէ թռչելով ու մահիճիս վրայ, մարմարի պէս ճերմակ մարմինդ սրտիս մօտ,

ՊԱՏ. Տէ՛ր, Տէ՛ր...

Մին. Տէ՛ր, փրկի՛չ, քու ոտքերդ այնքան անբիծ են ու սուրբ, որ իմ ծարու շրթներս անարժան են անոնց հպելու:

ՊԱՏ. Տէ՛ր, կը լսե՞ս...

Մին. կը լսե՞ս, ո՛վ աստուածներուն աստուածը...

ՁԱՐ. (բարկութեամբ դուր բանալով ակնարկը Մինասի աչեբուն կը հանդիպի. վայրկեան մը լուռ նայելէ վերջ վախով) Հայրի՛կ:

ՊԱՏ. (որ անցածէն բոլորովին միամիտ՝ դիմը պահած է ծունկի վրայ, կարծե՛ք կ'երագե՛) Եղբայր կ'ըսեն, քոյրի՛կ...

ՁԱՐ. Հայրի՛կ, խելքի եկուր...

ՊԱՏ. Հը՛, ինչ ըսի՞ր. խելքի եկուր: (դառնալով) Ա՛հ, դուն էիր աղջիկս:

ՁԱՐ. Ի՞նչ կ'ընէք հոս:

ՊԱՏ. կը տեսնես աղջիկս, մեղաւոր մարդիկ ենք, կ'աղօթենք որ Աստուծոյ կրակը չայրէ մեզ...

ՁԱՐ. Հայրիկ ի՞նչ կ'ընէք հոս:

ՊԱՏ. Օ՛, մի՛ չարանար աղջիկս, կը տեսնես որ սա սուրբ մարդուն հետ կ'աղօթենք...

ՁԱՐ. Սա՞ է սուրբ ըսածդ...

ՊԱՏ. Հա աղջիկս, մեղաւորը, հաւատի զինուորը:

ՁԱՐ. (լուռ Մինասին նայելէ վերջ) Բոլոր Սուրբերը ասոր պէ՞ս կ'ըլլան:

ՊԱՏ. Երանի թէ, աղջիկս, երանի թէ բոլորը հաւատի լուսով եղբոր պէս սուրբ:

ՏԵՍԻԼ Պ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԱԶԼՈՒ

ՆԱԶ. (մեկէն մտնելով, բոլորովին բարկացած) Հո՞ս է... հո՞ս ես, հա՞... աներե՛ս... հո՞ս ես...

ՁԱՐ. Մայրի՛կ...

ՆԱԶ. (առանց մտիկ ընելու Զարուհին) Հո՞ս ես, հա՛, չես ամչնար, Աստուծմէ չե՞ս վախնար... (նայն ատեն, երբ Մինաս որդե՛ս թե միամիտ, գլուխը կախ

նստած է, ու պատուելին ապառախ կնոջը կը նայի, վերջինս քաշուցի անոր ձեռքի աւետարանը): Կարդա՛. կարդա՛ սա տեսնեմ, քիչ մըն ալ մեր շունը կարդա նախինք բան մը պիտի հասկնա՛ս...

ՊԱՏ. Կնի՛կ...

ՆԱԶ. Կ'ապրի՞ս:

ՊԱՏ. (ուրումելի) Կը տանջուիմ, որ շուգեր մեռնիլ...

ՆԱԶ. [Մինասին] Ողբ՛ի:

ՄԻՆ. Պիտի ուզէի ողբիլ ըլլալ միայն թէ զիս...

ՆԱԶ. (ընդմիջ.) Ի՞նչ գործ ունիս հոս:

ՄԻՆ. Աստուծոյ ծառայութեան մէջ էի...

ՆԱԶ. Գլուխդ ուտէ աստուածդ: (պատուելիին) Ո՛ւր էիր:

ԶԱՐ. Մայրի՛կ, քա մայրի՛կ [ամբողջ սեսիլին, շատ անգամ կ'ուզէ հոր ու մօր միջեւ եղած վեճին միջամտել ու հայրիկ, մայրիկ բառերը կ'արտասանէ]:

ՊԱՏ. Կնի՛կ...

ՆԱԶ. Սատանայ՛, կոտորա՛ որ սատանայ...

ՊԱՏ. Աստուած հեռու պահէ:

ՆԱԶ. Ո՛ւր էիր ծաղրածու:

ՊԱՏ. Աստուծոյ տունը:

ՆԱԶ. Գլխուդ չփլա՛ւ:

ՊԱՏ. Սո՛ւս, հեթանոս, ամբարիշտ, հերիք հայհոյաս անոր որ քեզի կեանք է տուած:

ՆԱԶ. Գլուխն ուտէ տուածը եթէ քեզի պէս է:

ՊԱՏ. Կնի՛կ, պիղծ հոգի:

ՆԱԶ. Պիղծը քեզի խրատողն է:

ՊԱՏ. Զիս խրատողը արարիչն է ամէնուն:

ՆԱԶ. Նա՛հ քեզի և քու արարչիդ, որ քեզիպէս-

ներուն է առէր հոգի փրկելու պաշտօնը: Ո՛ւր էիր կորսուած մարդ, ո՛ւր էիր երբ եկեր քու տունդ կողոպտեր են:

ՊԱՏ. Կողոպտե՞ր: Ի՞նչ բան:

ՆԱԶ. Ի՞նչ բան: Քեզմէ զատ ինչ որ կար:

ՊԱՏ. (պարզապէս) Աստուած տուաւ, Աստուած առաւ, ես ինչ մեղք ունիմ:

ՆԱԶ. (լալալ) Ա՛խ, ինչո՞ւ քու հոգիդ չառաւ, ա՛խ այս ինչ կեանք է...

ԶԱՐ. (մայրը կը գրկէ լալալ) Մայրի՛կ:

ՆԱԶ. Ո՛ւհն՛ուհն՛ու, աստուած իմ աս ինչ տես է...

Աղջիկս ինչու կը թողուս ասոնք հոս:

ԶԱՐ. Ե՛ս:

ՆԱԶ. [Ես կը հրէ աղջիկը] Ո՛ւր էիր մա՛րդ:

ՊԱՏ. Կնի՛կ, կ'աղօթէի:

ՆԱԶ. Աղօթքդ գլուխդ չկերա՞ւ, այն տունը ուր կ'աղօթէիր գլխուդ չփլա՞ւ: Երբ տունը հղած չեղած չորս հաւն ու մէկ աքաղաղն են գողցեր, ինչի՞ ծառայեց աղօթքդ, ըսէ՛, ինչի՞, ինչի՞:

ՊԱՏ. Ինչի՞: Հոգիի փրկութեան:

ՆԱԶ. Վաղը քեզի ո՞վ ուտելիք պիտի տայ, ո՛ւր պիտի պառկիս, վատ հոգի՛, ինչո՞ւ գլուխս ելար, ինչո՞ւ օր առաջ, երբ դէմս չէիր ելած ու երբ դեռ սիրտս կտոր կտոր չէր եղած, ինչո՞ւ գլուխդ առած լեռները չգացիր, գազաններուն հետ, օձերու հետ, խոզերուն հետ... վա՛տ, վա՛տ:

ՊԱՏ. Ներէ՛, Տէ՛ր, ներէ այս մեղաւորին որ չի գիտեր թէ ի՞նչ կ'ըսէ: Էյ մեղաւոր, ճշմարիտ Աստուածն անոնցն է, որ գիտեն համբերել մինչև վերջին դատաստանի օրը:

ՆԱԶ. Դատաստանի քաջուխ ու քաջքջուխ, ծաղ-
րածու, եթէ հետդ եղողը պիտի խրէիր մինչև կոկորդ
ցեխի մէջ: Ծաղրածու, ծաղրածու, ծաղրածու:

ՊԱՏ. Կնի՛կ, սո՛ւս:

ՆԱԶ. Ի՛նչ, ձայնդ բարձրացա՞ւ:

ՊԱՏ. Հերիք է կնի՛կ:

ՆԱԶ. Է՞: Խորոզաբխնդ բռնեց ինչ: Մարդ եղար,
քա՛ջ, հերիք է ըսելու չափ լեզու ունիս: Հայտե՛, ես
ամէն օր հերիք է ըսելով բերանս մազ բուսաւ... [ծա-
մածուռքիւն] «հերիք է կնի՛կ»... հը՛, քար ըլլայիր
և գլուխս ջարդէիր: Դուն մա՞րդ ես, էրի՛կ, հայ՛ր,
կա՞ս, կ'ապրի՞ս, կ'ապրի՞ս:

ՊԱՏ. Կնի՛կ, դատաստանի օրը ես և դուն զէմ
զէմի կ'ելլենք: Այն ատեն դատաւորին...

ՆԱԶ. Մեռնելէ վերջ դժոխք: Ասկէ լաւ դժոխք:

ՊԱՏ. Կնի՛կ, շան աղջիկ, շան կաթ ծծած. Կնի՛կ.

ՆԱԶ. Ինչ ըսիր հոտա՞ծ, ինչ ըսիր մեռած, կնիկը
դուն ես, ոչ թէ ես, վախկոտ, փողոցի մէջ ծաղրուող,
տան հաւերը գողցնող, եկուր որ դատաստանը հիմա
կարենք, եկո՛ւր... [նազուստէն բռնած իրարու հետ կըր-
ուելու պէս դժուարաւ դուրս կ'ելլեն, մեկը միտէ «կնիկ»
կ'ապալակէ, միւսը «եկուր որ դատաստանը հիմա
ընենք»]:

ՏԵՍԻԼ Ե.

ԶԱՐՈՒՀԻ ԵՒ ՄԻՆԱՍ

ԶԱՐ. (որ սխուրթեամբ դիտէ եր հօրն ու մօրը կռիւը,
ես դառնալով պահ մը կը նայի Մինասին): Ատանկ կ'ը-
նէք ձեր աղօթքը: Ատանկ կը փրկէք ձեր վատի հո-
գին: Մարդոց մէջ սուրբի շապիկ կը հագնիք և սըր-

տերնուդ մէջ ժողովուրդի բարոյակա՞նր կ'ուղէք խախ-
տել... կը կարծէիր թէ՛ քու շնութիւնդ ամէն տեղ
սրբութեան տե՞ղ պիտի անցնէր... ելի՛ր սըկէ, ելի՛ր
դուրս, դո՛ւրս, դո՛ւրս:

ՄԻՆ. (անուրժ գլխիս կ'օրօրէ ոչ ըսելու համար):

ԶԱՐ. Ո՛չ: Դուն ամօթ չունիս, մարդկային զգա-
ցումը մեռած է... կո՛ւզ, կոնակդ վատութեամբ է լեց-
ուեր, ելի՛ր դո՛ւրս, շո՛ւս, թէ չ! գլուխդ կը ջար-
դեմ...

ՄԻՆ. Շատո՞նց ես ջարդեր մարմինս, սիրտս բզիկ
բզիկ ես ըրեր... ջարդէ գլուխս, թող դիակս ասկէ
դուրս ելլէ:

ԶԱՐ. [սարսա իով դրան մօտենալով] Եթէ չելլես կը
պոռամ...

ՄԻՆ. կը պոռա՞ս: Մի չարանար: Ելլե՞մ, ի՞նչպէս
ելլեմ երբ ոտքերս ես կապեր հոս: Տարիներ, տարիներ
դուն ես եղեր արեւը հողուոյս, դուն ես եղեր գոյու-
թեանս նպատակը, երազներուս թազուհին, ըսէ՛,
ինչպէս ելլեմ, երբ դուն հոս ես, հոս, քու շունչիդ
տակ մեռցուր զիս, որ դիակս հանեն, թող դիակս
հանեն քու քովէդ...

ԶԱՐ. Պիտի ելլե՞ս թէ չէ... [դուր կը զարնեն,
Զարուհի կը վազէ դրան]:

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ԶԱՐ. Ա՛հ վարդանը, ա՛խ, Աստուած զրկեց...

ՎԱՐ. Ի՞նչ կայ որ... հա՞, [ձեռքէն բռնելով] Ո՛ւր
է Զաքարը, (վազելով իր տեսած կոնակին դեմ կ'անց-

նի): Դո՞ւն: Ասո՞ր է որ կը պոռայիր: (Զարուհի գըլ-
խով այո կ'ըսէ) Ծօ անպատի՛ւ... Ծօ ժանտա՛խտ: [Ե-
տեւի կողմէն օձի՛քն բռնած դիակի պէս անշարժ կը
փաշէ դուրս) Եկու՛ր որ քեզի ցոյց տամ...
Մի՛ն. (բնաւ հոգ չընելով թէ զինք կը փաշտեն, աչ-
փերը սնկած Զարուհիի, դուրս):

ԶԱՐ. [մինակ դռան նայելէ վերջ արոնները կը
շփէ, պահ մը վերջ կը լսուի ազմուկ որ կամաց կամաց
կը մօտենայ, Զարուհի պատահանէն կը նայի]:

Տ Ե Ս Ի Լ Է.

ՆՈՅՆՔ ԶԱՔԱՐ ԵՒ ԽԱՉԻԿ

ԶԱՔ. [գրեթէ հրելով ներս կը բերէ Վարդանին, ու-
րոնց կը հետեւի Խաչիկ չար ժպիտս]: Խե՛նթ ես, Վար-
դա՛ն, զարնելէ վերջ հարուածիդ դիմանալիք մէկուն
զարկ: (Զարուհիին) Տեսա՞ր սըւոր կերած ապուրը...
բայց դուն ի՞նչ ունիս... Զարո՞ւ, ինձի՛ նայէ նայիմ:
Ուշացա՞նք, ինչու գէմքդ թթուեր է, հէ՞օ:

ԶԱՐ. Ոչինչ. գլուխս կը ցաւի:

ԶԱՔ. Գլո՞ւխդ կը ցաւի... գլո՞ւխդ կը ցաւի...

Զարու ինձի՛ նայէ, հոս, հոս [կը նայի] ա՛ (ձեռքը
բռնելով) կը վառիս, ըսէ՛ նայիմ ինչ ունիս:

ԽԱՉ. Կարելի է Վարդանին կոխէն է տեսած պա-
տուհանէն:

ԶԱՔ. Հա՞, ո՞վ եկաւ հոս:

ԶԱՐ. Հայրս ու մայրս:

ԶԱՔ. Եւ կոռեցան հա՞ [Զարուհի գլխով այո]:
Զարմանալի մարդիկ են, կոռեցու համար հոս գալու
ի՞նչ պէտք ունին: Անոնց կոխը սիրտդ դո՞ղ հանց:

ԽԱՉ. Խօ՛սք է ըսածդ, ծնողքն է չէ՛:

ԶԱՔ. Հոգ մ'ընե՛ր, մինչև հիմա հաշտուած ըլլա-
լու են: Հապա դո՞ւն, Վարդան, ի՞նչ կ'ուղէիր այդ
Աստուծոյ մէկ ողորմելի՛ արդէն մեռած մարդէն...

ՎԱՐ. Ատիկա ըսողը դուն ես, բայց ոչ ես:

ԽԱՉ. Ինչո՞ւ:

ՎԱՐ. Ոչինչ, բայց ձեզի լաւ խրատ մը:

ԶԱՔ. Ատենը գտար խրատի...

ՎԱՐ. Ճիշտ ատենն է: Ուրտեղ տեսնէք ատոր
պէս քողորմելի՛ արդէն մեռած՝ մէկը, գլխուն զար-
կէք...

ԶԱՔ. Վա՛ղ անցիր: Ի՞նչ բանի էիր այս կողմը:

ՎԱՐ. Հոգ մ'ընե՛ր, այդ ապուրը ձեռքիդ չեմ ե-
կած: Մայրս քիչ մը հիւանդ է, եկայ որ Զարուհին
մեզի տանիմ:

ԶԱՔ. Ծա՞տ հիւանդ է:

ՎԱՐ. Ո՛չ, բայց մինակ չէ կարելի թողուլ:

ԶԱՔ. Լա՛ւ, ճաշենք վերջը: Քալէ Զարու, ճաշը
պատրաստէ: Այս խեղճը պանիր հաց ուտելու կը
պատրաստուեր, նայէ ապուրին քիչ մ'աւելի ջուր
լեցուր:

ՎԱՐ. (Խաչիկին) Քրոջմէս լուր չունի՞ս:

ԽԱՉ. Ո՛չ, ատուեն դեռ բանչուէնէր...

ԶԱՔ. [ընդմիջ.] Թող այդ բոլորը, Վարդան գնա՛
Զարուհիի հետ ճաշ պատրաստէ: Մեզ մինակ թողու-
ցէք [Զարուհի եւ Վարդան խոհանոց կ'երթան]:

Տ Ե Ս Ի Լ Ը.

ԶԱՔԱՐ ԵՒ ԽԱՉԻԿ

ԽԱԶ. [պահ մը լուռ մնալէ վերջ] Հոս նայէ, Զա-
քար, լաւ մտածէ, քու յիմար մտքով պատճառ պիտի
ըլլաս, որ շան պէս ձեռ ուտենք:

ԶԱՔ. Ի՞նչ կ'ըլլայ:

ԽԱԶ. Էշու մը գլուխ, թող գան գլուխդ ջարդեն, ե-
րեսդ թքնեն ու դուն անդին նստիս նայիս: Ինչ կ'ըլ-
լայ-միլայ չկայ, եթէ վրանիս խուժեն... .

ԶԱՔ. [ընդմիջ.] Երեւի իրար չենք հասկնար: Ո՞վ
պիտի բլլայ մեր վրայ խուժողը:

ԽԱԶ. Ովը կա՞յ, գլխուդ դարնողին ո՞վ ըլլալը կը
հարցուի՞:

ԶԱՔ. Եղած տեղերնիս քարի պէս կարծր կը մը-
նանք: Եթէ իրենք ա՛յնքան ստորնացած են, թող հար-
ուածեն իրենց ընկերը... . [լուռ իւն]:

ԽԱԶ. Տղայութիւն, եթէ ինքզինքնիս չպաշտպա-
նենք, վաղը ընդհ. ժողովի մէջ ալ, մեզ որպէս ստոր
խառնակիչներ կը վտարեն:

ԶԱՔ. Ուրեմն դուն քեզ վտարուած չե՞ս կարծեր:

ԽԱԶ. Ո՞վ կրնայ զիս հոգիիս տունէն վտարել:

ԶԱՔ. Մի կատողիր: Ի՞նչ նշանակութիւն ո՞նի վը-
տարելը, դարնել ու երէկի շինածը փշրել, քանի որ
հարկ պիտի ըլլայ նորէն սկսիլ: Խնդիրը կէս փել ու
նորէն շինելով չի վերջանար, մեր ուզածը՝ բոլոր փրտ-
տածները կտրել, բոլոր մաշածները աղբին տալ, խար-
խոււ տուները հողի վերածել ու նոր հիմեր փորելն է,
որ գործը հաստատուն ըլլայ, Պէտք է եղած բերգա-
քաղաքը ներսէն գրաւելու աշխատանք ու դատ-
ուելիք մեղաւորները:

ԽԱԶ. Դատը որն է: Ո՞վ ուժով է, ձայնը անոր:

ԶԱՔ. [ընդմիջ.] Պա՛հ, դատ ըսածդ ինչ է որ... .

Իմ և քու դատութիւնը կ'ուզէիր: Ո՛հ, մերը հասարակաց
հարց է: Այդ ժողովէն չենք սպասեր որ մեզ մէկիկ
մէկիկ դատի կանչէ ու մեր խօսքը լսէ: Այդ տղու
խաղալիք կ'ըլլայ: Մեր ուզածը ազգային խնդիրներու
լուծումն է: Եթէ կ'ուզեն քեզի և ինծի շան պէս վը-
ռնտել, ի՞նչ կ'ըլլայ, ի՞նչ կը պակսի... . Իմ ուզածս
Դաշնակցութիւնը հիմէն սարսելն է, որ վերջ տրուի
մեր այս անաւոր թմբութեան: Ճշտուի թէ ո՞վ ենք
մենք, ի՞նչ է մեր նպատակը, ի՞նչ է միջոցը: Վերջա-
պէս ճանչնանք մեր անպարտելի ոսոխը: Ահա այս է
մեր ուզածը, ո՛չ թէ երթալ երկու ընկեր իրար կո-
կորդ սեղմել և աղուէսի ծաղրը վաստկիլ... . Մեր ամէն
օրուայ չափով բանաձևած, արիւն քրտինք՝ հազար
կարկտաններ իրարու կարած... . ա նո՛ թոյլ պիտի չը-
տանք որ գան մեր շրջանն ալ իրար ձգեն... . Հազիւ
կրցեր ենք իրարու մօտ բերել, ընկերական շրջանակ
մը կազմել... . Թոյլ տալ որ մեր վրայ թաս մը պող
ջուր լեցնեն:

ԽԱԶ. Զարմանալի տղայ ես, երբ մարդիկ դիրք
ճշտեցէք ըսելով կը պոռան, դուն ելիր նորէն «լօժ»
կ'երգ'ս:

ԶԱՔ. Դիրք կը ճշտենք, հոն ես իրենց կ'ըսեմ,
քանի որ ընկիւք չկայ, ետ քաշուեցէ՛ք, մենք ընկիւք
պիտի գտնենք:

ԽԱԶ. Հը՛:

ԶԱՔ. Հերիք ձեր զեղիս կեանքով մեր սանթիփները
մսխեցիք, այսուչետ մեր բոլոր ուժը Հայաստանին:

ԽԱԶ. Համայնավար է կ'ըսեն:

ԶԱՔ. Հողը համայնավար-մամայնավար չի ճանչ-
նար...

ԽԱԶ. Դուն քեզ տարօրինակ չե՞ս թուիր:

ԶԱՔ. Այո՛: Գուցէ տարօրինակ, բայց, հոգ չէ թէ ճակտիս դաշնակցական ածականը դրօշմեր եմ, ամէն հայ, որ ազգային ոգի ունի իր մէջ, ամէն հայ, որ հակառակ իր կամքին՝ կը զգայ թէ իր մէջ հայ հայրենիքի անհրաժեշտութիւնը կ'ապրի, անխտիր դաշնակցական է, Հօկ, Ռամկավար, ասոնց բոլորն ալ հայրենիք չե՞ն ուզեր: Մէկը Մարքսեան է միւսը Քրիստափորեան, բոլորը պարապ բաներ են, մեր ուղածը հայրենիք մըն է և ո՛չ աւելի: Գիտե՞ս թէ ի՞նչ է մեր մէջի տարբերութիւնը: Անհատներ են, չար նախանձախնդիր, իրարու դէմ կիրքով լեցուն և գիտես ի՞նչ է իրենց բրածը: Կուսակցութիւնները իբր զէնք, մեզ՝ ամբօրս ալ մէջը իբր փամփուշտ կը նետեն իրար և իրենց սրտի ժանգը կը մաքրեն... բոլորին ալ հարցուր. Հայ՞ ես, դաշնակցական, համայնավար, ռամկավար, հայ՞ էք: Քեզի պիտի ըսեն թէ նոյնիսկ ճայսինչականն են: Ըսէ՛, ի՞նչ է նպատակնիդ, պիտի ըսեն հայրենիք փրկել: Մօտեցի՛ր և ըսէ, քանի որ հայ ես և նպատակդ ալ հայրենիք փրկել է, քիչ մը զիչէ պաշտօնակից կուսակցութեանդ և միասին... հաւատայ խօսքիս, բոլորն ալ քեզ իբրև խնթ պիտի վնտեն:

ԽԱԶ. Անշուշտ, քանի որ իրարու մէջ լեռներ կան:

ԶԱՔ. Ի՞նչ լեռներ: Չծնած տղուդ կրնա՞ս անուն դնել, ըսէ, կինդ տղաբերքի է, անունը դրա՞ծ ես:

ԽԱԶ. Նախ նայինք թէ տղա՞յ է, աղջի՞կ է, ո՞ղջ է, թէ մեռած:

ԶԱՔ. Լմնցաւ. քանի հայրենիք չունինք զայն բաժնելու մասին ի՞նչպէս մտածել...:

ԽԱԶ. Հիմա ժամանակը կ'անցնի կոր, ի՞նչ պիտի ընենք:

ԶԱՔ. Թող ինձի ծեծեն, այդ պիտի նախընտրեմ քան թէ ես մէկուն վրայ ձեռք վերցնեմ: Ա. Սօ, իմ ասարիներէ ի վեր միասին՝ լաւ թէ գէշ՝ ինկած ելած ընկերոջս վրայ ձեռք վերցնել ինձի համար չիտկէ չիտակ մեռնիլ է: Ես իմ կարելիս պիտի ընեմ որ կոխ չըլլայ:

ԽԱԶ. Հապա որ ըլլայ... [դաւար կը զարնեն]:

ԶԱՔ. Ո՞վ է:

ԶԱՅՆ ՄԸ. Պարոն Խաչիկը կ'ուզեն: (Վարդան եւ Զարուհի բեմ կուգան):

ԽԱԶ. Անպայման Մարիամը ցաւ ունի:

ՎԱՐ. Խաչիկ կեցիր միասին երթանք:

ԶԱՔ. Դուն սպասէ՛, Վարդան:

ԽԱԶ. Քալէ: (Վարդանի հետ կ'երթան):

ՎԱՐ. Ես ճաշած եմ: Անցնելու ատեն մեզի մտիր

Զարուհիին հետ:

ԶԱՔ. Աղէկ:

Տ Ե Ս Ի Լ Թ.

ԶԱՔԱՐ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՔ. Զարո՛ւ, ճաշը պատրաստ է:

ԶԱՐ. Այո՛, Խաչիկը պիտի չգա՞յ:

ԶԱՔ. Կարելի է հիւանդանոց երթայ: Ինձի նայէ՛, այսօր դուն տարօրինակ ձեւեր մ'ունիս, խօսելու ատեն կարծես կը մսիս, Զարո՛ւ (քելը մեղքին) ի՞նչ ունիս:

ԶԱՐ. Չեմ գիտեր, ներսս տեսակ մը զոդ կայ:

ԶԱՔ. Ինչո՞ւ: Հօրդ ու մօրդ կոխը նոր չէ որ մէկէն վրադ ազդէ: Հապա Վարդանին կոխը, անկէ՞ վախցար:

ԶԱՐ. Ո՛չ:

ՁԱՐ. Հապա ի՞նչ:

ՁԱԳ. Կարծես երբ տակէ ելլենք մէկը վրանսխ խո-
շոր քար մը պիտի ձգէ: Ներսս սաստիկ վախ կայ:

ՁԱՔ. Վախ ինչէ՞ն: Թէ չէ ժողովի երթալէն:

ՁԱՐ. Եթէ այսօր ալ չերթաս ի՞նչ կ'ըլլայ: Ես
հրահող եմ, 1 կուր ժողովի մ'երթար:

ՁԱՔ. Խնայի՛ր ես ինչ: Այսօր ժողովի չերթալ կ'ըլ-
լայ: Պիտի բռն վախցաւ, պիտի բռնն ետեւսուն շատ
շատ կը նետէր, հիմա որ դէմ դէմի պիտի գան, ժողո-
վի չեկաս:

ՁԱՐ. Թող բռնն, ես կը վախնամ:

ՁԱՔ. Բայց չէ որ հօրեղբօրս պիտի երթանք:

ՁԱՐ. Ձե՛ս հասկնար, անգամ մը սիրաս դող ելլաւ
ալ մինչև լոյս աչքս չեմ կրնար փակել:

ՁԱՔ. Ինծի նայէ՛, սանկ աչքերուս մէջ, (ձեռնով
կզակը բռնած) քանի՞ ամուս է:

ՁԱՐ. (ազատուելով) Ո՛, ք:

ՁԱՔ. Ասկէ վերջ ատանկ վախեր կրնան գալ, դուն
այնքան միամիտ աղջիկ չես, որ մուկէն ու կատուէն
վախնաս, պէտք է յանդուգն ըլլաս և անվախ որ ծը-
նելիքը թուլամորթ, վախկոտ չըլլայ:

ՁԱՐ. Քա մեղայ, ինչ տղայ ես դուն, կ'ըսեմ թէ
ատիկայ չէ, և յետոյ, ի՞նչ ամէն բանի մէջ ատոր խօս-
քը բերանդ է:

ՁԱՔ. Ինչո՞ւ: Գո՛հ չե՞ս, (Ձարուհի ուտեր կը ցնցի)
եկուր նայիմ, (կը նստի) դուն երևի չես զգար թէ մեր
մէջ սուկաս մը կայ:

ՁԱՐ. [ուտերը ցնցելով] Հարստութի՛ւնդ չես կրնար
բաժնել:

ՁԱՔ. Ես հօրմէ մնացած ժառանգութիւնով չեմ

չփացեր որ իմ զաւակս ինձմէ անկարելին պահանջէ:

ՁԱՐ. Ազգիդ չորպան խառնող մ'աւելնայ...

ՁԱՔ. Մինչև անոր հասնիլը... ուրեմն դուն չե՞ս
հասկնար, չե՞ս զգար թէ մեզի զաւակ մը պէտք է,
զաւակ մ'անանուն, որուն հացը ես՝ ջուրը դուն. պէտք
է խնամենք, գուրգուրանք, սիրենք... Ինծի այնպէս
կը թուի, առանց զակի՛ ես ու դուն երկու խեղճ որ-
բերենք, որբեր ամիտփուած շատ փոքր կղզիի մը մէջ,
զիչեր ցորեկ մեր աչքերը հորիզոնին՝ ծփացող ծովու
հեռաւոր մէկ խորչին, կը սպասենք մեծ, շատ մեծ նաւ-
ուս մը թևատար՝ ազատօրէն թռչող նաւու մը որ մեզ
պիտի տանի ազատ երկիր, բոլոր երջանիկներու մեծ
կղզին: Այդ նաւը պէտք է գայ, անուշիկս դուն մի
տրամիր...

ՁԱՐ. [ընդմիջ.] Կու գայ օր մը. նպատակիդ կը
հասնիս: Նաւը կու գայ այն յոյսով թէ մեզ քու «ըը-
ւարթ» խաղաղ կղզիդ պիտի տանի, բայց մտքէդ չէ
անցեր թէ ծովուն բացերը՝ ալիքները լեռներու պէս
պիտի խուժեն նաւուն վրայ ու գայն ժայռերուն զար-
նել կրնան սպառնալ, անա այն ատեն, երբ հովո՛ւ փո-
թորկին ձեռքը խաղալիք ըլլանք, գլուխնիս պիտի
դառնայ, խելքերնիս պիտի խառնուի, յուսահատ ճի-
չեր, ազնուութիւն, մէյ մըն ալ նայիս ջուրը պիտի
խուժէ...

ՁԱՔ. Օ՛յ, օ՛յ, օ՛յ, խեղճ աղջիկ, կը վախնաս մայր
ըլլալէ, կը վախնաս՝ ախտութե՛դ բան մը պակսի, կը
վախնաս՝ ազո՛ւ որութենէ՛դ բան մը զակիդ տաս, մը՝
տահոգութիւնդ շատնայ ու կը վախնաս պայքարէ...
Ո՛չ, հոգիս, պայքարի մէջ ամէն բանէ դաս ունինք

առնելիք, ամէն ապրող մեր ետեւէն քար կրնայ նետել, ամէն ապրող կը ջանայ մեզմէ բան մը խլել: Հոգ ընել գրեթէ անմտո թիւն է, որովհետեւ կեանքը վազող գետի պէս իր ընթացքն ունի, ուզենք թէ ոչ պիտի անցնինք ամէն տեղէ, զարնուելով ժայռերուն ու օձի պէս գաշտի մէջ սողալէն: Սէր իրարու հանգէպ, չպակսիր. ապրելու փափաք ու կամք, նայէ տակաւին մեր լաւագոյն գարուններն են: Ուրեմի մեր երկուքի սէրը մէկտեղ, ծնինք զաւակ մը, այդ սիրոյ փաստն ու պտուղ, գուրգուրանք անոր վրայ, վիշտ ու զուարթութիւն խառնենք իրար ու կեանքը մեր պահանջէն...

ՁԱՐ. (ընդմիջ.) Ինծի նայէ՛:

ՁԱՔ. (լուռ նայելէ վերջ) Ըսէ՛:

ՁԱՐ. (նոյնպէս նայելէ վերջ կը սեղմուի Ձախարին] Դուն ըսէ՛:

ՁԱՔ. Ըսէ, ըսէ... մե նո, քանի որ մեր սրտերն իրար կը հասկնան ալ լեզուի ինչ պէտք կայ... անուշիկ մայրիկս, թոյլ տուր որ գլուխս կուրծքիդ վրայ հանգչի, և դուն, ինչպէս մեր գիւղացի մայրիկները կը սիրեն իրենց զաւակներու գլուխը գրկած նայիլ, ու մատներս ծայրով ոջիլ փնտռել՝ գրկէ՛ գլուխս և ձեռքդ անոր վրայ, մազերուն մէջ [գլուխը կուրծքին վրայ]:

ՁԱՐ. Օ՛ լա՛, լա՛, կեցի՛ր:

ՁԱՔ. (աւելի լաւ սեղաւորուելով): Կեցիրի-մեցիրի ատեն չկայ: Նայէ՛, Ձարու, դուն ինչպէս երկար տարիներ իր որդին չտեսած մայրիկ, ես ինչպէս տարիներ տարիներ օտարութեան մէջ խարուած՝ կեղծիքի շուկաներէն զգուանքով վշտացած՝ երկա՛ր, երկա՛ր ճամբու տաժանքէն վերադարձող զաւակ, իրար կը գրկենք

ու մեր սրտերը կու լան ,կը բղկտուին այս վիճակին առջև: Ա՛խ գիտնայիր թէ որքան մեծ բան է երկու մարմնի մէջ մէկ հոգի, որ չի խաբեր իր անդամին: [Ձարունի գրկած է գլուխը եւ մտածոս օրօրումէ վերջ իր գլուխն ալ կը դնէ անոր լրայ: Այս լուռ տեսարանը վայրկեան մը կը տեւէ, որմէ վերջ Ձազար շատ անուշաւայնով եւ մեղմ]: Ա՛յ, ինչո՞ւ մարդիկ սիրոյ անուշութիւնը չեն զգար, ինչո՞ւ անկեղծութեան առջեւ զըլուխնին չեն խոնարհեր, ինչո՞ւ այնքան չար են, որ իրարու միտ կ'ուտեն: [դաժան] վատե՛ր, վատե՛ր, ապուշնե՛ր, տգէտնե՛ր, տգէտնե՛ր:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ



Տեսարանը ժողովարան մըն է, երկար ու նեղ, որու մեջտեղ եւ երկայնքին բարակ սեղան մը: Այս սեղանի ծայրը սրահի մուտքին կը կորսուի: Սրահը երկու պատուհան ունի եւ մեկ մուտք, այսինքն սրահի շարունակութիւնը: Հայելի երկու պատուհանի մեջտեղ: Չափազանց ընկալիչներու ռեֆլեկտոր ֆիշ մը անկէ կողմ: Պատուհանի մեկը սրահի վերջաւորութեան, միւսը նակսիկ Սեղանին վրայ կան ջուրի շիշեր եւ փոշիի անակներ: Երեսունի մօտ արտուներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՃԱՆՃԻԿԵԱՆ ՅԵՏՈՅ ՍԻՐԳԷՅԵԱՆ

ՃԱՆՃԻԿԵԱՆ. (նսած է սրահի վերջաւորութեան, ձեռքի ուստեղէն լրագիրը կարգալով հանդերձ, մերթ մամը կը նայի, մերթ պատուհանէն գուրս մուտքի դրան

կը նայի ու նորէն կը կարդայ: Պահ մը վերջ գլուխը [երգնելով, դռնէն եկողին չոր ժպիտով մը] վերջապէս կը դա՞ս:

ՍԻՐԳԷՅԵԱՆ. [յոզնած մարդու կերպարանք] Ինչո՞ւ: Բարեւ ձեզ: (ձեռք կուտայ):

ՃԱՆ. Բարեւ, Ի՞նչպէս, լա՞ն էս:

ՍԻՐ. Լաւ գէշ նոյն գինն է, կը շարչրկուինք:

ՃԱՆ. Լաւ եկար, վախենում էի որ կանուխ չես գայ: Նամակն ստացե՞լ ես:

ՍԻՐ. Այո՛:

ՃԱՆ. Այդ լաւ: Ինչ էի ուզում ասել, հա՛, Ի՞նչպէս է վերջացել ուրբաթի ժողովը:

ՍԻՐ. Միշտ նոյն բանը: Անգամ մը որ աչքերը պաղին, ալ եղած չեղածին խերը տես:

ՃԱՆ. Ի՞նչ էս հասկանում դրանից:

ՍԻՐ. Պարզ է, չէ՛, էջը որ անգամ մը յամառի կէս ճամբէն տող երթալ չուզէ, ալ հազար ըսէ՛, խրատէ՛, դգո՛ւէ՛, խոստացիր ջաղացք հասնելուն գինք հիւրասիրել... Ը՛ն-ը՛ն-ը՛ն, ո՛չ ոչով ոչ: Մարդիկ ամէն բան սեւ տեսնելու երդում են ըրած... Ղըր-դունեցին, բոլորը սուտ, բոլորը խարդախ, ... մերժելով կը մերժենք, ըսելով կը պոռան:

ՃԱՆ. Դրան սպասում էինք: Իսկ իրանց վարչութեան լուծո՞ւմը:

ՍԻՐ. Նոյնպէս կը մերժեն:

ՃԱՆ. Խեղճ փոքր հոգիներ, բայց վերջապէս չե՞ն ուզում ըմբռնել, թէ, այդ սխալ խարխափումներով, իրանց դիրքն են վտանգում:

ՍԻՐ. Խելքս չի հասնիր, միայն թէ, հոն՝ ուրբաթի ժողովին մէջ, ես կարմրած աչքեր տեսայ, կճրտող

ակռաներ: Մէկը կը պոռար թէ այդ ոճիրներու ոճիրն է, մենք այդ տեսակ կուսակցապետներ չենք ուզեր: Ուրիշ մ'աւելի լալկան կ'աղաղակէր թէ Դաշնակցութեան մէջ սեւազուլու օձեր են մտեր, որ իրենց թոյնով բոլորը կը թունաւորեն: Երրորդ մը զանազան մարգարէութիւններ կ'ընէր, թէ այսօր՝ այսօրուան ժողովին մէջ, դուք ընկեր ընկերով դէմ պիտի հանէք, հոս կուր պիտի ըլլայ, իրար գլուխ պիտի կտորտան... Յետոյ՝ իբր թէ դուք, այդ բոլորէն գոհ, բաժնեկով չըջանը երկուքի, պիտի խնդաք մեր վրայ:

ՃԱՆ. Ուրի՞նչ:

ՍԻՐ. Ուրի՞նչ, ուրի՞նչ, հա՛, դեր ու դէմ վիճեցան այսօր ժողովի գա՞լ թէ չգալ: Մէկ կողմը կը պնդէր բնաւ ժողովի չգալ, քանի որ հոս կուր տեղի պիտի ունենար: Միւս մասը կը պնդէր բոլորը մէկ հոս գալ ու մէկ մարդու պէս իրենց զգուանքը յայտնել...

ՃԱՆ. Ուրեմն կը գա՞ն:

ՍԻՐ. Այո՛:

ՃԱՆ. Այդ լաւ: Հիմա բոլորին լուր տուե՞լ ես:

ՍԻՐ. Այո՛:

ՃԱՆ. (ընդմիջ) Բոլորը գալո՞ւ են:

ՍԻՐ. Մա՞. (ժամանակ) ես ոտքը այրած շան պէս վազեր՝ վազվզեր, ամենուն ձայն եմ տուեր: Եղբայր, դարմանալի մարդիկ են: Ինչո՞ւ պարզ ազդ մը կարգալով թերթի մէջ կը վազենք ժողովի, իսկ ազաները կը սպասեն որ մէկիկ մէկիկ իրենց հրամայէք ըսենք: Ես ինչ պարտաւորութիւն ունիմ տունէ տուն վազելու: Շունը բռնի հօտին եթէ զրկես, ի՞նչ խեր պիտի բերէ: Յիսուն հոգիի անուն կայ մէջտեղ, երեսուն անոտ ...

ՃԱՆ. Ուրբաթ օր բան չասի՞ր:

ՍԻՐ. Գտա՛ր, հազիւ բերանս բացի, գայլի պէս վրաս խուժեցին:

ՃԱՆ. Այդ հաշուող դրանք մեզնից շատ կը լինեն:

ՍԻՐ. Ատիկա անկասկած է:

ՃԱՆ. Դու միամիտ կաց, նրանք մեզնից աւելի չեն կարող լինել:

ՍԻՐ. Ի՞նչպէս:

ՃԱՆ. Ախր, դու լաւ գիտես, օրէնքը մեր ձեռքումն է, չէ՞:

ՍԻՐ. Օրէնք չճանչցողին օրէնքն ինչ է:

ՃԱՆ. Լսի՛ր: Օրէնք չճանչցողին, չե՞ս իմանում, թէ ինչ են անում: Խօ՛, սուրը մեր ձեռքումն է, չէ՞...

ՍԻՐ. Երբ խնդիրը այսչափ բարդացաւ... երբ սե կատուն մեր ետեւէն չէր ինկած, այն ատեն մէջտեղ չկայիք իսկ հիմա որ... բանը բանէն կ'անցնի ելեր սպառնալիքով գործ կ'ուղէք առաջ տանիլ:

ՃԱՆ. Մի տե՛ս, մի տե՛ս, դու երեխայ չես: Իրերը հասկանում ես եղածի պէս: Մէկ մարդը երկու կըտոր չեն անում: Լինել իւրրոյի անդամ և շարքային տղոց...

ՍԻՐ. Այո՛, այո՛, իսկ հիմա՞, հիմա ի՞նչ պիտի ընէք:

ՃԱՆ. Հարց մի տայ, էլի՛, կ'անենք ինչպէս ուզում ենք:

ՍԻՐ. Բայց պիտի չճանաչանդին:

ՃԱՆ. Դու միամիտ կաց: Կուսակցութիւնը դրանց-պէսներ շատ է տեսել: Ամէն անգամ որ նման չփացողներ են լոյս աշխարհ ընկնում, մենք նրանց ցոյց ենք տալիս օրէնքի այն յօդուածը, որ դրանց սպանազանոց է տանում:

ՍԻՐ. Սակայն՝ այդպիսով՝ տարիներու...

ՃԱՆ. [ընդմիջ.] Անհնազանդ հազարից մէկ հնազանդը... (դուրս կը նայի) Մարդ է գալիս: Ուրեմն այդպէս ձեր գործարանից ևս արձակում են...

ՍԻՐ. [զարմացած] Ի՞նչ:

ՃԱՆ. Անոնք որ օտար են, իսկ տեղացիներին բան չեն անում... [Խաչիկ կը մտնի] Բարև Խաչիկ:

ՏԵՍԻԼ Բ.

ԽԱՉԻԿ. Բարև ձեզ: (կը նայի) Ես, ինծի առաջինն ըլլալ կը կարծէի:

ՃԱՆ. Եթէ մի րոպէ առաջ գայիր, առաջին կը լինէիր: Դեռ աթոռները պաղ են: Հա, իմացայ, մի մանչ զաւակ ես ունեցել, աչքդ լուսով:

ԽԱՉ. Շնորհակալ եմ: Ճիշտ անկէ կու գամ: Բայց չըսիք, նոր եկա՞ք:

ՃԱՆ. Այո՛:

ԽԱՉ. Հը՛: Ես հիւանդանոց գացած էի կինս տեսնելու: Վերադարձիս հոս ճաշեցի, և, զարմանալին, կէս ժամ կայ որ դրան մօտ նամակ կը գրէի:

ՃԱՆ. Այո՛, տեսնաք շատ էիր դրադուած և չուզեցինք խանգարել:

ԽԱՉ. Վնաս չունի: (ժամանակ) Ընկեր ձանձիկեան:

ՃԱՆ. Հա՛ ջանս:

ԽԱՉ. Ի՞նչ ժողով է այս:

ՃԱՆ. Ժողով է, էլի՛:

ԽԱՉ. Քիչ մը տարօրինակ չէ՞:

ՃԱՆ. Ժողով է, էլի՛, դրա տարօրինակն ինչ է: Շրջաբերական չէ՞ք ստացել:

ԽԱՉ. Սովորականէն շատ աւելի:

ՃԱՆ. Այն ատեն...

ԽԱՉ. Լաւ բան չէ ձեր ըրածը: Պատմական մեծ սխալ:

ՃԱՆ. Եւ այդ սխալը գտնողն էլ դու ես, զայն քննադատողն էլ Խաչիկը կը լինի:

ԽԱՉ. Ինչո՞ւ:

ՃԱՆ. Դու մի երախայ ես, էլի՛:

ԽԱՉ. Չեր բոլոր երախաները ինծի պէ՞ս կ'ըլլան:

ՃԱՆ. Համարեայ: Յաճախ մի քիչ աւելի խելացի

ու լուրջ...

ԽԱՉ. Եւ այդ խօսքերն ըսողը Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ ձանձիկեանն է:

ՃԱՆ. Այո՛, ձեզ սպասարկող անարժան մի մարդ, որ կեանքն է մաշեցրել քեզ նման տղաներին խօսք սովորեցնելով, չէ՞:

ԽԱՉ. Եւ կամ՝ աւելի ճիշդը, մեզի պէս խղճալը-ներու քթէն բռնած, ինչպէս կատուն մուկին պոչէն, խնդացիք էք վրանիս:

ՃԱՆ. Ի հարկէ երբ պէտք լինի, ամէն գոյն ձերմակի ենք ներկում:

ԽԱՉ. Այո՛, երբ շահու վրայ է խնդիրը, կեսաբացիներուն էջ ներկածին պէս, դուք ալ մեզ կը ներկէք, որ նպատակնուդ հասնիք: Բայց ինչո՞ւ կը պարծենաք ձեր մեծութենէն, քանի որ օրէ օր՝ ոտքերնուդ տակի հողը կը սահի...

ՃԱՆ. Կը սահի կը սահի, դրա համար մենք չենք ցաւում, քանի որ քեզ նման ղրջախ տղաներ ունենք, որ կարող են մեր տեղը բռնել...

ԽԱՉ. Ատիկա մենաշնորհի պէս ձեզ մալ էք ըրած, որ եթէ դուք չվերընտրուիք, պիտի ընտրուին այն-

պիսիներ որ ձեր օձիքէն չեն բռներ:

ՃԱՆ. Երևի դրա համար է որ ձեզ պէս տղաներ չփացել են:

ԽԱՉ. Չէ՞, կը յուսայի՞ք մեր բոլոր լսած ու տեսածներէն վերջ պիտի լռէինք:

ՃԱՆ. Ի՞նչ ունես ասելու:

ԽԱՉ. Ի՞նչ ժողով է այս:

ՃԱՆ. Ձեր մայրը ձեզ վեց ամիսէ՞ն ծնաւ: Դու խօհարաց ու փորձ անելու չես: Մի տես, ո՛վ է քեզ հետ խօսողը: Տղա՛, ասա ինձ, ինչո՞ւ չես հնազանդում քու վերին մարմին:

ԽԱՉ. Ես ալ ձեզի չափ անկախ անհատ եմ: Եթէ դուք ձեզ երկրին ու երկնքին տէրն ու տիրականը կը կարծէք, ես ալ այս շրջանի կուսակցական կազմ ըստեղծողներէն եմ, և վեց տարի է բոլորի վստահուած թեամբ շրջանին գանձարկղը պահած եմ:

ՃԱՆ. Եւ ի՞նչպէս:

ԽԱՉ. Ատիկա ընկերներս կրնան քննադատել, բայց եթէ բաղդատութեան դրուի, կարծեմ ես աւելի լաւ կատարած կ'ըլլամ պաշտօնս՝ քան թէ դուք...

ՃԱՆ. Դու մի գուարճալի տղայ կը լինես: Խեղճ տղայ, վեց տարի, մի վեց դար պէտք է հանգստեան կոչել...

ԽԱՉ. Որովհետեւ ձեր սիկառին լուցկի չի զարներ ու մանաւանդ ձեր սայլին առջև քար կը գլտորէ:

ՃԱՆ. Տղայ մի լինի, ընկեր Խաչօ, ենթադրէ՛ քեզ նման ամէն տղաներին մեր բոլոր ըրած ու անելիքի մասին հաշիւ տայինք... Դու կանոնադիր կարդացել ես, իմանում ես օրէնք: Ծանաչում ես սև ձերմակ: Ի՞նչ է ձեր ուղածը: Ինչո՞ւ չէք ուզում հնազանդուել այն մարմին որ ձեր բարձր ժողովը է ընտրել: Մենք

հնազանդում ենք նրան: Դուք ինչո՞ւ չէք հնազանդում մեզ:

ԽԱՉ. Այդքան ատա՞ն: Ես հարցուցի այսօրուայ ժողովին ինչ ըլլաւ:

ՃԱՆ. Դիտես չէ՞: Մի շատ պարզ բան:

ՍԻՐ. Դէմքդ հայելիի մէջ պիտի տեսնես:

ԽԱՉ. Սո՛ւս ծօ, իմ դէմքս ալ, սիրտս ալ մէջտեղ են: Իսկ քու աղտոտ դէմքդ շրջանիս ախտն է:

ՃԱՆ. Ո՛չ, այդպէս չէ կարելի իրար հասկնալ:

ՍԻՐ. Ատիկա քիչ ետքը յայտնի պիտի ըլլայ:

ԽԱՉ. Ինձի նայէ՛, ծօ հոտած սոխ, դուն դաշնակցական ըլլալու...

ՃԱՆ. [ընդմիջ.] Ո՛չ, ո՛չ, գուցէ և քեզնից լաւ դաշնակցական է:

ԽԱՉ. Անշուշտ քանի որ ձեր վարտիքին խոնձան է:

ՃԱՆ. Տե՛ս, տղայ, որ մի քիչ քաղաքավար լինես, ասածդ կշռես, նախ ոչինչ չես կորցնի, յետոյ խօսքդ մտիկ ընող կը լինի: Դա քո ընկերն է, չէ՞, դու մի սև կէտի ես ուղղել քո նայուածքն ու կոյրի պէս գլխում ես յամառ, մինչ նա՛, մտիկ է անում և՛ մէկին և՛ միւսին ու հնազանդում է կանոնագրին...

ԽԱՉ. Հարկա՛ւ, վարժապետ մը իր աշակերտները հմայելու համար, անոր բարոյականի դասեր կուտայ, իսկ դպրոցէն դուրս... Ատիկա՞ է... Սա՞, որ պէտք ունի... նախ պէտք է զայն ժալիչ ջուրով՝ իր սրտի ժանգէն մաքրել...

ՍԻՐ. Ինձի՛ նայէ, բերնիդ կաշի անցուր:

ԽԱՉ. Քանի քու բերնիդ պլպեղ չէ քսուած, ըսեմ նաև: Ո՛ւր որ երթաս, քու պատկառելի ներկայութենէդ սարսափելով ամէն խօսք կանգ կ'առնէ:

ձԱՆ. Դա արդէն ընկերավայել բան չէ...

ՍԻՐ. Ապո՛ւշ,

ԽԱՉ. Սո՛ւս: Տեղդ ծանր նստէ:

ձԱՆ. Էլի՛, էլի՛, լռէ՛, ասուժ եմ...

ՍԻՐ. Սըւոր նայէ՛, բռնես վզէն:

ԽԱՉ. Իրա՞ւ:

ՍԻՐ. Հարկա՛ւ: (ոսփի):

ԽԱՉ. Չափու՛իլ կ'ուզե՞ս, հրամմէ՛: (ոսփի) Ո՞ւր է զէնքդ:

ՍԻՐ. Քեզի համար...

ԽԱՉ. Սո՛ւս, ծօ մատնի՛չ: [արագ բռնածին պես գետնին կը զարնէ]:

ձԱՆ. (Երկար նայելով) Յիմարներ...

(Չափար կ'երեւի, վայրկեան մը շուարած տեսարանին նայելէ վերջ կը վագէ):

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՔ ԵՒ ՉԱՔԱՐ

ՉԱՔ. Խաչի՛կ, Խաչի՛կ, խենթ էք, ծօ՛, ծօ՛, (ուժով վրայէն ետ կ'առնէ) Ամօթ է, ծօ՛, ամօթ է:

ԽԱՉ. Սրիկայ քեզի՛:

ՍԻՐ. Կը տեսնուինք: Ապո՛ւշ, ուրացող...

ՉԱՔ. (լուռ կը նայի Խաչիկին, Սիրգեյեանին յետոյ ձանձիկեանին նայելէ վերջ) Եւ այս տեսարանին առջեւ ձեր սիրտը չփլա՞ւ:

ձԱՆ. Անվայել բան է:

ՉԱՔ. Տեսնելով այս՝ տարիներով երկու եղբոր պէս ապրող տղոց զիրար բզկտելը, ձեր աչքերը չլեցուցան ազի արցունքով:

ձԱՆ. Մի տղայ էլ դու: Խօ ես չհրամայեցի որ զիրար կզեն: Ի՞նչ ես մրթմրթում, որ ասելիք ունես հիմա կը տեսնուենք:

ՉԱՔ. Լաւ ըսիք: Կը տեսնուինք:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՔ ԵՒ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐ

Ճանձիկեան եւ Սիրգեյեան՝ պահ մը շուռ մտածելի վերջ, անշուշի ձայնով կը խօսին այնպիսի նիւթի մը շուրջ, որակ յայտնապես կ'երեւի Սիրգեյեանի դժգոհիչը: Չափար հրեղով դրան մօտ կը սանի Խաչիկին, կը նստի սեղանի երկու կողմը, ու մինչ, Խաչիկ ջրայնոտ շարժումներով միւսները ցոյց կուտայ, Չափար կը ջանայ զայն հանդարտեցնել: Միջոց մը վերջ, մինչ ձանձիկեան եւ Սիրգեյեան դեռ կը խօսին, Խաչիկ տեսակներու մեջ բաներ մը կը նշանակի, Չափար ծխելով կը դիտէ անորոշ կէտ մը: Կը մտնեն ժողովականներ, նախ մեկ մեկ յետոյ կը բազմանան: Ետեւով խուճապ կը կազմուի ու երեւոյթով գաղտնի, կը խօսին օրուայ ժողովի մասին: Երջանակ եւ կազմած Խաչիկի եւ Չափարի մօտ, ուր հարցումներ, պատասխաններ ընդմիջումներ եւ գաղտնի ակնարկներ դեպի ձանձիկեան: Բողոքուած եւ նաեւ ձանձիկեան շուրջ, կը խօսին նոյնպէս անհասկնալի այլ շուշի ձայնով: Ժողովականները հագում եւ արեւի կաւ պսխար մաքուր ու ձաշակով: Ունակ իրենց հետ կը բերեն գաւաթներ, ուրիշներ կը ծխեն, կը խնդան, կը հագան: Աղոտ կ: Մտաւր ծուխով լեցուն է: Ճանձիկեանի պահանջին վրայ, Սիրգեյեան հանրեղով ներկաները՝ հաւանութիւն կուտայ:

ՃԱՆ. (մասիսս:| սեղանը ծեծելով) Ընկերներ՛ր: [սն-
լսելի կ'անցնի] Սը՛սսս... Ընկերներ՛ր, լուսթիւն: Հը՛,
հը՛, ընկերներ՛ր, ախր ժամանակն անց է կացել... Լո՛ւէ՛
ընկե՛ր, ընկ... լո՛ւէ՛: [սմեկ կողմէ «լոէ, սրսո» կը ձայ-
նեն] Ընկերներ՛ր, նախ քան ժողով բանալս, խնդրում
եմ բոլորից, որ վերջ տան ծխելուն, թէ չէ՛, որ ամէն
մարդ պաշխոստուի ծխի, սրանից մի ժամ վերջ հոս
բնակել չի կարելի: (շաս գեռ կը նայ) Բիչ անդին նրս-
սողին որ կը խօսի ընկերոջ հետ: Սը՛սս, սո... ախր
մի լո՛ւի, է՛... ընկերներ՛ր, այսօր ժողովուել ենք հոս,
ո՛չ թէ մի պարզ տեղական զրոյցի, այլ ժողովուել ենք
Հ. Յ. Բիւրոյի հրաւէրով, եւ ընկերական ընդհանուր
ժողով է սա, ուր պիտի խօսենք կուսակցական կարեւ-
որ, մանաւանդ ներքին հարցերի շուրջ: Ուրեմն, նը-
կատի առնելով ժողովի իրաւական հանգամանքը, ես,
որպէս Բիւրոյի ներկայացուցիչ, վեր եմ առնում ժո-
ղով վարելու իրաւունքը: Իսկ դուք, կ'ընտրէք մի
քարտուղար:

ՉԱՅՆԵՐ. Չաքար, Խաչիկ, Յակոբ, Յովհաննէս,
Խաչիկ, Խաչիկ:

ՃԱՆ. Ընկեր Խաչիկ՛, դու կը լինես քարտուղար:

ԽԱՉ. [խոժոռ] Լա՛ւ: (քուլք, մասիս առած կը գրէ):

ՃԱՆ. Ուրեմն, ընկերներ՛ր,

ԱՆՏՈՆ. Ներողութիւն...

ՃԱՆ. Ընկեր Անտո՛ն:

ԱՆՏ. Չայն կու տա՞ք:

ՃԱՆ. Այո՛, բայց ըստ էութեան:

ԱՆՏ. Իմին ըսելիքս սա է: Կ'ուզեմ գիտնամ աս

ինչ ժողով ըլլալը:
ՃԱՆ. [հաղթ ժպիտով] Ընկե՛ր Անտո՛ն, ախր մի
թող, էլի՛, թող մի բան ասենք: Ասի քիչ առաջ, չէ՞,

սա Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյից կանչուած ժողով
է...

ԱՆՏ. [ընդմիջ.] Աղէ՛կ, աղէ՛կ, ես կ'ուզեմ ինչ
ժողով ըլլալը...

ՃԱՆ. Ընկե՛ր Չայն, երեխայ մի լի, ասի չէ՞, ժո-
ղով է եւ ժողովին ինչ լինելը նոր չէ որ պիտի սովո-
րես:

ԱՆՏ. Տէր ողորմեա՛...

ՃԱՆ. Ընկե՛ր Անտո՛ն, ախր ամօթ է, էէ՛...

ԽԱՉ. (մասք վեր) Ընկե՛ր նախագահ:

ՃԱՆ. Որ ըստ էութեան է, ասա՛:

ԽԱՉ. Ընկերը կը հարցնէ. այս ժողովը միայն

դաշնակցական ընկերներո՞ւ է յատուկ, թէ չէ...

ՃԱՆ. Ի հարկէ՛ ոչ: Դուք տեսնո՞ւմ էք մի այդ-
պիսին:

ԱՆՏ. Իմ գիտնալով՝ ձեր քովինը, յատուց կայ,

իր պարտականութիւնը — չէ՞, Խաչիկ՛:

ՃԱՆ. [Սիրգէյեանը ցոյց տալով] Սա՞:

ԱՆՏ. Ո՛չ, միւսը:

ՃԱՆ. [իր բով նստած լաւ հագուած երիտասարդը

ցոյց տալով] Սա՛:

ԱՆՏ. Չէ՞, Խաչիկ՛:

ԽԱՉ. Ընկերներ՛ր...

ՃԱՆ. (ընդմիջ.) Ընկե՛ր, լսիր, (միւսին) ընկե՛ր,

դու քու պարտականութիւնը կատարե՞լ ես: (գլխով

հաստատելով ցոյց կուտայ գուճաւոր անդամատերը): Լաւ,

ընկեր, շատ լաւ, էլ ի՞նչ էք ուզում, սա իր պար-

տականութիւնը լիովին կատարել է:

ԶԱՔ. Կը բողբոջեմ:

ՃԱՆ. Ինչի՞ դէմ:

ԽԱՉ. Կամաց քիչ մը, ընկե՛ր նախագահ, ուրեմն

դաշնակցութիւնը դրամակա՞ն կուսակցութիւն է: Այդ ձեր քովը նստող թոյլ տուէք որ ըսեմ «այդ պարոնը» որովհետեւ ատանկ դաշնակցական չըլլար, «այդ պարոնը» երեք տարուայ ընթացքին կուսակցական ո՛չ մէկ ժողովի մասնակցած է:

ՉԱՔ. Ես իմ ձեռքով եմ գրած, երեք հաս նամակ ու իր ուշադրութիւնը հրաւիրած ներքին կանոնադրի յօդուած 11ի վրայ, բայց այդ ընկերը չէ զիչած նոյնիսկ պատասխանելու:

ՉԱՅՆ ՄԼ. Դո՛ւրս:

ՈՒՐԻՇ ՄԼ. Տրտը՞ն մտիկ պիտի պիտի ընենք:

ԽԱԶ. Սը՛սս, ընկե՛ր, դուն իրաւունք չունի՛ս դաշնակցական անունը կրելու: Իրաւունք չունիս այս տղոց՝ մեր բոլորին հետ նոյն սեղանին շուրջ՝ նոյն սուրբերու անունով աղօթելու, հոս, մանաւանդ այսօր որ ճակատագրական է: Իրաւունք չունի՛ս կը կրկնեմ, որովհետեւ մենք բոլորս գործարանի աղտ ու կեղտին մէջ՝ ամէն օր տապալակելով հանդերձ, ընտանեկան ծանր հոգերով կքած ըլլալով մէկտեղ, տգէտներ ըլլալով հանդերձ, չենք մոռնար, չենք ուրանար թէ հայ ենք ծնած ու այնպէս կ'ուզենք ապրիլ... խօսք չէ՛, կատակ ալ չէ՛, մենք կը մոռնանք ընտանիք, յոգնութիւն ու շարթթը հեղ մը ժողովի, հանդէսի ու դաշնագան կուսակցական գործերու ետեւէ կը վազենք, որպէսզի՛. մեր հայ ըլլալը գոնէ այսքանով հաստատենք ու մեր հոգիի ազգային անզուսպ ծարաւին գոնէ մասամբ բւարարութիւն տանք, բանով մը մինք մեզ մխիթարենք: Իսկ դո՛ւն, դուն կ'արհամարհես մեր ընկերակցութիւնը, որովհետեւ քեզ պէս նուրբ ճաշակ չունինք, կ'արհամարհես մեր հազար տանջանքով ու զոհողութեամբ կազմակերպած հանդէսները,

որովհետեւ քու նուրբ ականջներուդ... որովհետեւ կարմիրի ներկուած... .

ՃԱՆ. Է՛, է՛: սա անվայել բան է: (մասացոյց եղած պարոնը, բոլորովին ընկնուած կը մեկնի՝ միևնչայդ ձանձրկեան ապշած նայելով) Մի կա՛ց, ախր մի կա՛ց, չըլինի... ընկե՛ր Խաչիկ... դա մարդավայել՝ ընկերավայել բան չի: Ախր մի կը հասկնան... .

ԽԱԶ. Մենք շատոնց հասկցեր ենք: Այ հերիք չէ՞ որքան կեղծաւորութիւն, խաբելու արուեստին ուժ ենք տուեր: Ընկեր նախագահ ես կ'ատեմ... .

ՃԱՆ. [ընդմիջ.] Բաւէ՛, դու երևի մի սուրբ ես, լա՛ւ, թող քո ասածը լինի: Ուրիշ զիտողութիւններ կա՞ն:

ԽԱԶ. Այո՛: Երկու ընկերուհիները տակաւին անցեալ տարուէն պարտք ունին:

ՄԻՐ. Կը բողոքեմ, ընկե՛ր նախագահ, հոս պախալի խանձութ է, թէ կուսակցական ժողով, որ պարապ բաներով ատեն կ'անցընենք:

ԽԱԶ. Մինակ քու գլուխդ է պարապ... .

ՃԱՆ. [ընդմիջ.] Լո՛ւէ՛:

ՉԱՔ. Այո՛, ընկեր, այսօր շատ մը «պարապ բաներու» եւ «խնչուս պէտք»երու հաշիւը պիտի տեսնենք: ՉԱՅՆ ՄԼ. Չենք լսեր, չենք լսեր, չենք լսեր... .

ՈՒՐԻՇ ՄԼ. [միւսին] Ծօ՛ վարնոց, հերիք տրտընաս, եթէ չես լսեր, դուրս ելի՛ր... .

ԱՆՏՈՆ. Է՛, է՛, է՛:

ՃԱՆ. [ուժգնօրէն սեղանը ձեծելով] Սո՛ւս:

ՉԱՔ. Թորո՛ս, կը բաւէ՛:

ՃԱՆ. Ընկերո՞ւնք, ես շատ եմ ցաւ զգում ձեզնից լսելիս նման անհանդուրժելի խօսքեր: Պէտք է պա-

զարիւնով դուրս գալ, մանաւանդ դուք իրար հայր մայր չէք սպանել... Ընկերներ էք չէ՞, ինչո՞ւ իրար վիրաւորել: Հիմա դա մի կողմ: Հարց եմ տալիս, կարո՞ղ են ընկերուհիները ժողովին մաս կազմել:

ԽԱՉ. Ըստ կանոնագրի 11րդ յօդուածին, ձայնի իրաւունք չունին:

ՃԱՆ. Լաւ թող այդպէս լինի:

ԽԱՉ. Ո՛չ թէ խաթրի համար, այլ ձեր գրած օրէնք այդ է:

ՃԱՆ. Հասկցանք, էլի՛:

ԱՆՏ. Խաչի՛կ, ալ համը չեն հաներ:

ՃԱՆ. Ուրի՛շ:

ՉԱՔ. Ես պիտի խնդրէի ընկեր նախագահէն, որ մեզի ծանօթացնէր դրան մօտ նստա՞ծ ութ անծանօթները, և կամ աւելի ճիշտ է ըսել, անոնց ներկայութեան բուն պատճառը:

ՃԱՆ. Ախր պարզ է չէ՞, դրանք այլ շրջանի տղերք են, բոլորն էլ լաւ տղերք, պարտաճանաչ, զոհարեր, ի՞նչպէս կ'ուզէք որ ասեմ: Դրանք եկել են ձեր ժողովին:

ԽԱՉ. Ինչո՞ւ են եկեր:

ՃԱՆ. Եկողին ինչու է եկել չեն ասում, այլ ստուգում թէ իրաւ կուսակցական են թէ...

ԽԱՉ. Ինչէ՞ն գիտնանք:

ՃԱՆ. Ես դրանց մի առ մի ճշնաչում եմ, բայց նորից կարող էք իրանց անդամատետրերը նայել:

ԽԱՉ. Անդամատետրը թուղթ մըն է:

ՃԱՆ. Հիմա, ընկե՛ր Խաչիկ, այդ հէքեաթներով ատեն պիտի անցընենք: Ինծի հաւատք չունէք,

նրանց վկայականը եղող անդամատետրի՞ն էլ հաւատք չունէք, էլ ի՞նչ էք ուզում: Ի՞նչ է ձեր նպատակը, ժողով խանդարել էք ուզում, թէ՛ ձեր էջն էք ուզում քչել:

ԽԱՉ. Մենք միայն սեւը ճերմակէն զատել կ'ուզենք: Ուրեմն ատոնք պարզապէս հիւրե՞ր են:

ՃԱՆ. Ի հարկէ՛:

ԽԱՉ. Աստուծոյ հիւրե՛ր...

ՃԱՆ. Երբ դու շարունակես չլուի, ես քեզ իսկոյն դուրս կ'անեմ:

ԽԱՉ. Հարկա՛ւ, քանի որ ուժովը դուք էք: Ընկերներ, այդ խումբը տասնապետով՝ միասին, մեր ժողովին հիւ՛ր են եղեր, աստուծոյ հիւր, բայց ընկերներ, ինչո՞ւ մինչև օրս ատանկ հիւրեր, խոժոռ, կարմրած աչքերով, սպաննացող, աստուծոյ հիւրեր չենք տեսած, հէ՞, ընկեր նախագահ...
ՃԱՆ. Հրամայում եմ քեզ լուի:

ԽԱՉ. Չէ՛...

ՍԻՐ. (որ բողոքի անգուսպ շարժումներ կ'ընէր) Թող լուէ՛ սա անբանը:
ՈՒՐԻՇ ՄԸ. Պռռտախօս:

ՈՒՐԻՇ ՄԸ. (Սիրգեյեանին) Անբանը դո՛ւն ես, ծօ անսրե՛ս:

ՈՒՐԻՇ ՄԸ. Թողէ՛ք խօսի, ինչո՞ւ կը միջամտէք:
ԱՆՏ. Է՛, է՛, է՛...

ԽԱՉ. Վնաս չունի, միաս չունի: (պահ մը կը կարմրի եւ պոռքկումով) Ընկե՛ր նախագահ, ալ կը բաւէ, դիմախները վա՛ր, վարադոյ՛ը թող պատռի՛, (սարսափելի դեմք ունի) հերիք չէ՞, հերիք չէ՞ որքան մեր հա-

բազատ մեռելներու անթաղ ոսկորներով մեր կողերը
ջարդեցիք: Հերիք չէ՞, որքան մեր սրբութիւնները
պաշտել կեղծեցիք ցորեկը, խակ մութին մէջ՝ հայհոյե-
ցիք, վրանին թփիք, զիրենք ծաղրի առիք:

ՃԱՆ. Այ տղայ, ի՞նչ ես դուրս տալիս, գիտե՞ս:

ԽՍԶ. Վրանիդ չէ՞ք ատներ: Ես հայ եմ և տասը
տարի է դաշնակցական: Ես դաշնակցական արժանա-
պատուութիւն ունիմ, է՛, ի՞նչ, ուրեմն մենք կատղած
չունե՞ր ենք, յիմարնե՞ր, տխմարնե՞ր, որ մարդիկ կը
բերեք մեզ ձեռնուր: Ամօթ չէ, մենք արժանապատու-
ութիւն չունի՞նք: Տասը տարի եղաւ, տասը տարի, որ
դաշնակցականի գոռոնս կը փչէինք, տասը տարի, և
ընկեր նախագահ, երբ մեր ժրաջան մշակի հունձքը կը
բերէինք ձեզի, առանց նայելու մեր աչքերու գոյնին,
անմոզ ժպիտ մը դէմքերնուդ, մեր կոնակը կը շոյէիք,
մինչ այսօր, երբ մեր խոնարհ մշակի՝ հնձուորի հաշիւը
կը պահանջենք, ձեռնով կ'ուզէք վարձատրել, հրամե-
ցէ՛ք, վախցողը ես չեմ:

ՃԱՆ. [պաղ] Ըսի՛ր, էլ չկա՞յ:

ԽՍԶ. Եթէ այդ ութ հոգին ժողովէն չելլեն, այն
ատեն մնացեալը կը տեսնէք:

ՃԱՆ. [պաղ] Չէ՛, բոլորիդ կարծիքն ա՞յս է:

ՁԱՅՆԵՐ. [ովանկ այլ, ովանկ ո՛չ, զանազան կէտե-
րէ մասեր կը բարձրանան ու ձայն կ'ուզեն:]

ՁԱՔ. Ընկե՛ր նախագահ, եղէք այնքան բարեացա-
կամ, որ ընկերներ իրարու դէմ չզայրանան:

ՃԱՆ. Լա՛ւ, է՛լ ինչ:

ՁԱՔ. Կը պահանջեմ ութ հիւրերու հեռանալը:

ՃԱՆ. Լա՛ւ, էլի՛, լա՛ւ, էլ ինչի էք եղած չեղած
կեղտով դուք ձեզ աղտոտում: Ախր դրանք ժողովին
հիւր են, ես իրաւունք չունեմ սրանց դուրս անելու:

Բացէք ներքին կանոնագիրը, կարդացէք 19րդ յօդ-
ուածի յաւելուածքը, հոն իրաւունք է տալիս այլ շրջ-
ջանի ընկերով ներկայ լինել որեւէ խմբական ժողովի:

ՁԱՔ. Գիտեմ որ ատանկ է, բայց եթէ այդ ութ
հոգին ասկէ դուրս չելլեն, հոս ժողով անդի պիտի չու-
նենայ: Եթէ խառնակութիւն առաջ դայ, պատասխա-
նատուն դուք պիտի նկատուիք: Ասոր հակառակ՝ եթէ
դուրս ելլեն՝ կը խոստանանք պաղարիւն ըլլալ ու
ձեզ լսել:

ՃԱՆ. Լա՛ւ, ընկե՛ր, լաւ: (դուրսիներուն) Շատ
եմ ցաւում, ընկերնե՛ր, բայց ճար չկայ, սրանց մօտ
ամէն բան կտակածով վարակուել է: Խնդրում եմ՝ ա-
ռանց վշտանալու՝ ժողովից հեռացէք: (մեռացող ոսկու-
նայներ կը լսուին): Ուրեմն, էլ ուրիշ ըսելիք կա՞յ:
(չորս կողմը լաւ մը դիտելի եւ հազալէ լեց) Ընկեր-
նե՛ր, ուրեմն անցնինք օրակարգի: Նախ՝ թոյլ տուէք՝
մի քանի խօսքերի մէջ ամիօփի՝ ձեզ ներկայացնել, կամ
աւելի լաւ է ասել, վերջիչեցնել վերջին մի տարուայ
անցքերը արեւմտեան Եւրոպայի Դաշնակցական մար-
տայի: Ինչպէս գիտէք, ատենէ մը ի վեր մէջտեղ դրժ-
գո՞ն տարր մը կար, որ միշտ էլ եղել է, որու վերջնա-
կան չափը պիտի տար շրջանային ժողովը: Ներկայ
տարուայ կիսուն, Հ. Յ. Գ. Իւրոյի վճռով, լուծուեց
Կ. Կոմիտէն որ սկսած էր հակակոնստանդուպոլիս մութ
աշխատանքի լծուիլ ատենէ մը ի վեր: Սրանից քիչ
վերջ գումարուեց Եւրոպայի շրջանային ժողով: Այս
տարօրինակ ժողովում, մոռնալով մի յստակ կանոնագ-
րի գոյութիւնը, որի գործադրութեան հսկիչն է Իււ-
րոն, սկսան ամէն հարց իրանց խելքով չափել, երբ
անդին կանոնագիր կար: Այս ժողովն իրան ամենա-
կարող կարծեց, ամէն հարց արմատապէս լուծել ու-

ՉԱՔ. Ընկերներ, վերջապէս թողէք որ խօսինք: Ինչո՞ւ իրաւունք չունիմ խօսելու, ընկե՛ր ճանճիկեան:

ՃԱՆ. Ընկե՛ր, ես եկել եմ հոս, ձեզ գծի բերելու և ո՛չ թէ... Դու չես կարող խօսել, ո՛չ թէ միայն խօսել, այլև ժողովիս ներկայ լինել չես կարող:

ՉԱՔ. Ինչո՞ւ:

ՃԱՆ. Կ'ասե՛մ, կ'ասե՛մ, դու, էլի՛, դու մի բան-գէտ, իրաւագէտ, չեմ իմանում գեռ ինչազէտ, ասելու համար արար աշխարհի, թէ դո՛ւ էլ ես իմանում բան գրել, չէ՞, երևում թուղթ մրոտում, յօդուած գրում ու գլխից մեծ քար ձօճում սրա ու նրա գլխին. չէ՞:

ՉԱՔ. Այդ բոլորէն որո՞ւ փորն է ցաւեր:

ՃԱՆ. Ի հարկէ՛ կանոնագրին:

ՉԱՔ. Ուրեմն կանոնագրի գործը ինձի պէսեր վըտարե՞լն է:

ՃԱՆ. Լսի՛ր, լսի՛ր, կ'ենթարկուե՞ս, թէ ոչ:

ՉԱՔ. Այդ աեսակ կանոնագրի ծանօթ չըլլալով, չեմ ենթարկուիր: Ես հոս իմ ընտանիքիս մէջն եմ: Եթէ ընկերներուս մեծամասնութիւնը դուրս ելիր ըսէ, ես իսկոյն կը մեկնիմ:

ՉԱՅՆԵՐ. Ո՛չ: Ո՛չ: Ո՛չ: Այո՛: Ո՛չ: Ո՛չ: Այո՛: Ո՛չ:

Ա. ՉԱՅՆ. Լուսթի՛ւն:

Բ. ՉԱՅՆ. Դո՛ւրս:

Գ. ՉԱՅՆ. (գուրս բացողին) Հոս նայէ՛... .

Բ. ՉԱՅՆ. Ի՛նչ, կապիկի երեսի՞դ կարօտ էի:

ԱՆՏՈՆ. Է՛, է՛, է՛, հերի՛ք իրար միս ծամէք:

ՉԱՔ. Ընկերներ, թոյլ տուէք որ իրար հասկընանք: Ընկե՛ր Բիւրոյի ներկայացուցիչ, ես յարգելով կը յարգեմ իմ վրաս նշանակուած պետը, ըլլայ ան Բիւրոյի անդամ թէ պարզ խմբապետ: Սակայն՝ բար-

ձըր մարմնի մը անդամը, որ Քրիստափոր Միքայէլեանի աթոռն է գրաւեր՝ պէտք է ճշմարիտ առաքեալի մը բաց ճակտով, բարձր արժանիքով, պաշտելի անկեղծութիւնը ունենայ... .

ՃԱՆ. [ընդմիջ.] Հասկանում եմ, ընկե՛ր, բայց հիմա նման հէքեաթ պատմելու ասանը չէ՛, հասկացիր, էլի՛, ժողով է սա և կարևոր անելիքներ կան:

ԽԱՉ. Ընկե՛ր նախագահ: Ըստ էութեան:

ՃԱՆ. Խօսէ՛, ըստ էութեան:

ԽԱՉ. Անցեալ ուրբաթ օր, չըջանիս մէջ, ժողով ունէինք:

ԽԱՉ. Ո՞ւմ հրաւերով:

ԽԱՉ. Շրջանային կոմիտէի վարչութեան:

ՃԱՆ. Լսի՛ր, լսի՛ր, ձեր շրջանային կոմիտէն սըրանից տասն օր առաջ է լուծուել: Այն օրից որ նա ստացել է շրջաբերական, նրա բոլոր գործունէութիւնը լրացել է:

ԽԱՉ. Ձեր ըսածը ձեզի համար օրինաւոր է. բայց ոչ մեզի: Որովհետեւ մեր ժողովը չմարսեց ձեր նետած քարերը:

ՃԱՆ. Ընկե՛ր, եթէ մի քիչ մաքուր լեզուով խօսիս, մի մեծ բան չես կորցնի: Ձեր ժողով անելը, մեր հրահանգներին, հնազանդուելը դա ձեր գիտնալիք բանն է: Իմ ասելիքը սա է. մէջտեղ մի կանոնագիր կայ, որի ամէն մի յօդուածը մի օրէնք է: Կը հընազանդուէ՞ք այդ օրէնքներին: Եթէ այո՛, պիտի լուէք, իսկ եթէ չէ՞ք հնազանդուիր, դա էլ ձեր գիտնալիք բանն է:

ԽԱՉ. Ի՛նչ որ ալ ըսէք, ես իմ խօսքս պիտի կրկնեմ: Մենք ուրբաթ օր ժողով էինք գումարած, ուրկէ կը բխին մեր այսօրուան ըսելիքները:

ՃԱՆ. Ընկե՛ր, վերջին անգամ կրկնում եմ, դուք ո՛չ մի ասելիք չէք կարող ունենալ:

ԽԱՁ. Ըսելիքնուս առաջինը, մեծամասնութեամբ կը հաստատենք, թէ դուք՝ այս ընթացքով հայ յեղափոխական Դաշնակցութիւնը դէպի քայքայում կը տանիք համր քայլերով, ինչպէս թոքախտաւորը մահ: Երկրորդը, անվարան է և խղճի անկեղծ ձայնով ձեր երեսին կը պոռանք, Հ. Յ. Դաշնակցութեան գործի վերայ եղող մեր ազգային ճակատագիրը վարող՝ ղեկավարներ, այլևս մեր մէջի հաւատքը ձեզի հանդէպ և վստահութիւնը բացարձակապէս մեռած է: Երրորդը, մեր մէջ վախ կայ, սարսափելի կասկած թէ ձեր մէջ ծախուածներ կան, դաւաճաններ...

- Ա. ՁԱՅՆ. Մերուժաններ:
- Բ. ՁԱՅՆ. Ազէֆներ (աղմուկ):

ՃԱՆ. (ոսփի ելած, վճացած մարդու դեմով՝ չորս բոլորի իրարու դեմ պոռպուալը կը դիտէ):

ՉԱՔ. (ոսփի) Ընկերներ: Ընկ... Խաչի՛կ, Յակոբ, Վահան... ընկերներ, վերջապէս այսպէս չէ կարելի շարունակել:

ԱՆՏՈՆ. Է՛, է՛, է՛: Իրար միտ մ՛ուտէք [ձայները կը դադարին]:

ՃԱՆ. Ո՛վ որ իրան վատ է զգում, կարող է մեկնել: Ո՛վ որ չէ ուզում Բիւրոյի հրահանգներին հնազ...:

ՉԱՔ. (ընդմիջ.) Թոյլ տուէք, ընկե՛ր ձանձրիկան, թոյլ տուէք որ իրար հասկնանք, թէ չէ, Բիւրոյի հրահանգները Նիքոլա Չարի դրամին չափ կ'աժանանան:

ՃԱՆ. Դու՛ երևի շատ ես անպատկառ դարձել, որ այդ...

ՉԱՔ. [ընդմիջ.] որ պէտք ունիմ խրատուելու, չէ՞,

Շնորհակալ եմ ցարդ ստացած խրատներուս համար և այդ վերջինը չեմ մերժեր, պայմանաւ ստիպյա՛ն որ դուք ինձմէ առաջ՝ շօշափելի փաստերով ցոյց տաք հոս եղողներուն, ընկեր, թէ՛ մեր աստուածային բարձր մարմնի՝ անխոցելի պատկառանքը՝ Քրիստափորի, Ռոստոմի, Չաւարեանի սրբային պատկառանքը, անպատուութեան հետ չէք շփոթած: Համոզէիք մեզի, ընկե՛ր Բիւրոյի անդամ, թէ՛ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխականի պատկառանքը՝ Փարիզի պարասրահները չէք իջեցուցած: Այո՛, գլուխնիդ կը շարժէք, չէ՞, «մի քանի վստասերածներից» ենք տարուած, չէ՞. այդպէ՞ս է ձեր բոլորի կարծիքը:

ՃԱՆ. Այո՛, միշտ էլ այդ կարծիքէն եմ հղել: Տեսնո՞ւմ էք, պարզ է չէ՞, մի տղա, էլի՛, մի խեղճ ողորմելի տղայ. մի ոմն Չաքար, որ մարդ լինելու համար հարկ է նորից ծնիլ, ա՛հա այդ ողորմելի արարածը, կայնել է մի ժողովի մէջ, որպէս մի քաջ սպայ պատերազմի դաշտին՝ դասալիք զինուորների մէջ, առանց որ մի պաղ սարսուռ զգայ իր անդամների մէջ, առանց որ մի րոպէ անդրադառնայ թէ՛ գուցէ մի վատ բան է անում, դաւաճանող միտք է տարածում իր միամիտ ընկերների մէջ, օգտուելով սրանից որ... Վերջապէս ա՛յ տղայ, պիտի հասկնա՞ս և քեզ նմանները հասկնան, թէ մենք սրա ու նրա խաղալիքը չենք կարող լինել: Մինք կ'երթանք մինչև մեր եկած տեղը:

ՉԱՔ. Անշո՛ւշտ կ'երթաք, բայց վերադառնալիդ առաջուց ապահովելէ վերջ, չէ՞...

ՃԱՆ. Ապրի՛ս, ապրիս...

ՉԱՔ. Կը ծաղրէ՞ք. ծաղրեցէք: Ընկե՛ր նախագահ, դուք շատ կը սիրէք կանոնադրէ՛ օրէնքէ ճառել, չէ՞, այդ օրէնքները ձերն են, դո՛ւք էք շինած, հետևաբար

ձեր շահուն համապատասխան է: Իսկ բոլոր այն օրէնքները որ ձեր շահուն ձեռնտու են, մեր ազգային շահերուն վնասակար են: Ահա թէ ինչու ձեր օրէնքները զօրութիւն չունին: Կրնաք ըսել թէ «մի վատասերած էլ սա է», ըսէք, բայց ես իմ լեզուիս, հայու սրտէս բխած զգացումներս կը փոխանձեմ ընկերներու: Քրիստափորի մահէն վերջ ատեն մըն ալ անոր յիշատակը քալած է, բայց՝ տանըչորսէն վերջ, Դաշնակցութիւնը առևտրական տունի մըն են վերածեր, ու անոր զեկավար տարրը եզած են պարզապէս շահակիցներ, որոնք ամէն ընդհանուր ժողովէ վերջ ըսեր են. «վերջապէս անա չորս տարի ես, որ կը լինենք Փարիզի պարասրահներու հերոս». չէ՞:

ՃԱՆ. Պաւո՛ւ, շարունակիր է՛...:

ՉԱՔ. Շարունակե՛մ. բայց ի՞նչ հարկ կայ քանի որ ձեր խիղճը այդպէս հանգիստ է: Չէ՞. Ի՞նչ բան որ անստճօր է լսել կը հեզնէք ու...:

ՄԻՐ. Ի՞նչ է այս, ալ ատոր մտաշնորդ մտիկ պիտի ընենք:

ՃԱՆ. Կը բաւէ:

ՄԻՐ. Իրմէ դատ չկա՞յ:

ԽԱՉ. Հապա քու տրտոս՞ցդ մտիկ ընենք:

ՉԱՅՆ ՄԸ. Ամօթ է, ամօթ, ամօթ:

ԱՆՏՈՆ. Է՛, է՛, է՛:

ՉԱՔ. Ընկե՛ր նախագահ:

ՃԱՆ. Սո՛ւսս: Ախր սա յիմար բան է հոս դատարան չէ և ես դատուելու չեմ եկել որ...:

ՉԱՔ. [ընդմիջ.] Լաւ ըսիք, շատ լաւ, ասիկա մեր դատարանն է և հոս ալ ձեզ դատուելիք վայրը: Քանի որ ցարդ գումարուած ընդհանուր ժողովները դատարանի չեն վերածուեր ու յաջորդներէն ալ աւելին չենք

սպասեր, թոյլ տուէք որ մեր խօսքը հոս ըսենք:

ՄԻՐ. Ընկե՛ր նախագահ:

ԽԱՉ. Ընկե՛ր նախագահ:

ՉԱՅՆ ՄԸ. Ընկեր նախագահ.

ՈՒՐԻՇ ՄԸ. Ընկեր նախագահ:

ՃԱՆ. Սիրգէյեան:

ՄԻՐ. Ընկերնե՛ր, ես կ'ուզէի որ՝ սա ինքզինքը բանի տեղ դնող տղան՝ մեզի բացառէր իր հազար անգամ կրկնած խօսքը, թէ «ընդհանուր ժողովը դատարան ըլլալու էր, մեր ապիկայր զեկավարութիւնը դատելու համար»:

ՃԱՆ. (ընդմիջ.) Հարկ չկայ, հարկ չկայ, այդ...:

ՉԱՔ. (ընդմիջ.) Հարկ կայ, ընկեր նախագահ, հարցը անդին է տրուած ուստի վրան մի հողէք: Թող ընկերներս վստահ ըլլան՝ ըսելիքներս առաջուց մտածուած են հետեւաբար անոնց պատասխանատուն եմ: Դաշնակցութեան մէջ ընկերներ կան՝ երկմիտ տղաներ՝ ինչպէս Սիրգէյեան, որոնք կը կարծեն թէ յիսխիշահն իրապէս աչքահին փոխանորդն է. հետեւաբար անկէ իջած ամէն կամայականութիւն, անբռնաբարելի օրէնք է: Ուրեմն այդ օրէնքներուն դէմ ընդվզիլ դասալքում է, դաւաճանութիւն: Ընկերնե՛ր, յիսխիշահ թէ կուսակցապետ ըլլալ, կը նշանակէ ժողովուրդի բարիքին ծառայել, և ոչ թէ ընդհակառակն՝ թքնել անոր աչքերէն հոսող արցունքին վրայ, զայն ցեխին խառնել: ՃԱՆ. Լսում ե՛մ, լաւ ես խօսում, միայն կարճ կապէ՛...:

ՉԱՔ. Կա՞րճ կապեմ: Հապա դուք որ քսան տարի օրօր էք ըսեր ու մեր միամտութեան հետ խաղցիր: Միթէ կարճ կապել մտքերնուդ չանցա՞ւ: Չեզ դատի պէտք է քաշել, որովհետև ատոր միայն արժանի էք:

հերիք է որքան ձեզ յարգեցինք երբ մեր սրտով կ'ատէինք: Այն դուք չէ՞ք, որ մեր լեռներու վրայ իրենց կեանքը՝ մեզի համար, մեր ազատագրութեան համար զոհաբերուող ֆէտայիները ծաղրեցիք ու սւեցուցիք երբ իրենց արիւնի կարմիր գոյնով Հայաստանը ներկուած էր: Ըսէ՞ք, դուք չէիք Անդրանիկը տրամուրթեամբ գերեզման զրկողը: Այն դուք չէ՞ք, որ ձեր մորթը ողջ պահելու համար միայն, Հայաստանի հանրապետութիւնը, մեր հարիւր տարուան վաստակը, մեր ֆէտայիներն ու սպաները ծախեցիք թուրքին, մեր դարաւոր թշնամիի: [ընդմիջելով զանազան ձայներ կ'ազաղակեմ, վասե՛ր, դաւանումնե՛ր, էիջ մը աղմուկ]:

ՃԱՆ. Օ... Լուսթիւն... Ասա՛, էլի՛, դու դարձել ես մի բոլշեիկ...

ԶԱՔ. Հրամեցէ՞ք, բոլշեիկ: Կը մերժեմ ձեր ածականը: Կը մերժեմ ձեր դաշնակցական և բոլշեիկ ածականները: Կը մերժեմ, այո՛, որովհետև ես հայ եմ, հայ, կը հասկնա՞ք, հայ եմ և կը տառապիմ, երկրէ երկիր բոշայի կեանք կը վարեմ, կը մղկտուիմ իմ հայու պատիւս պահելու համար: Իսկ դո՛ւք, իմ՝ աս տղոց, մեր բոլորին արիւնը պղտորելու, մեր արիւնը օտարացնելու համար, տասը տարիէ ի վեր սառնասրտութեամբ օրօր կ'երգէք: Այո՛, կ'օրօքէք, մեզ իրարու դէմ կուռի կը մղէք, մէկը բոլշեիկ է, միւսը դաշնակցական, ուրիշ մը ուսմկավար: Հապա այս բոլորին մէջ ձեր դարձուցածը ի՞նչ է:

ՃԱՆ. Խեղճ տղայ, սրա ականջին այնքան են լեցրել...

ԶԱՔ. Որո՞նք: Վատասերածները: Ո՞վ է ան, որ պիտի գայ մեր բախտին հետ խաղալ: Այս խօսքերն այսօր ձեզի կ'ուղղեմ, վաղն ալ անոնց, բոլոր անոնց

որ իմ ազգիս շահը իրենց փորին կը կապեն: Բայց քիչ մը պարզ խօսինք: Քիչ առաջ իրարու ետևէ շարեցիք, կախակայեցինք, վատեցինք, լուծեցինք և կը շարունակուի: Կեղրոնական կոմիտէն լուծեցիք որովհետև «վատասերածներին» կը բողկանային: Իսկ շրջանային ժողովը: Անո՞նք ալ վատասերած էին: Երեսուն հոգի, որոնք հազար հոգիի ձայնով կը խօսէին, ուզեցին շիտակ ըլլալ, բայց դուք՝ անոնց շիտակ մարդու աչքերուն մէջ ձեր գերեզմանը տեսնելով, ուզեցիք անոնցմէ ալ տեսնուիլ ըլլալ և այնքան փոքրացաք որ ըսիք, իրենց մէջ դաշնակցական չկար: Չէ՞ք հաւատար. սո՛ւտ է. մեր շրջանի ամենէն վերապահ տղաքը այդ ժողովին մասնակցեցան, որոնք, իրենց զեկուցման մէջ, ձեր անունը սարսափով կ'արտասանէին: Պատճառն ի՞նչ է: Ձեր հասկցած դաշնակցականը ի՞նչ պէս կ'ըլլայ:

ՉԱՅՆ ՄԸ. Կոտորով, կոտորով...

ՃԱՆ. Սը՛սս: Պրծա՛ւ: Սրտի ժանգը թափե՛լ է:

ԽԱԶ. Այդքան խօսքէ վերջ դեռ կը խնդա՞ք:

ՃԱՆ. Դու ի՞նչ ես ասում: Էստեղ դատարա՞ն է:

ԽԱԶ. Այո՛, դատարան է:

ՃԱՆ. Եւ դատաւորն էլ երեւի Զաքարն ու դու կը լինես, հա՛, հա՛, հա՛:

ԽԱԶ. [չղայնօ] Կը խնդա՞ք: Ձի հաւնեցա՞ք մեզի: Հապա մինչև այսօր մեղիպէսներու անունով խօսի՛լդ: Հապա մինչև օրս մեր կոնակէն ապրի՛լդ, մեղիպէսներ շահագործե՛լդ:

ՃԱՆ. Խօսե՛, էլի՛, լսում եմ:

ԽԱԶ. Չես լսեր, մեր խօսածները սա պատին համար են և ոչ թէ ձեզի:

ԱնՏՈՆ. Ընկե՛ր նախագահ:

ՃԱՆ. Դո՞ւ էլ:

ԱնՏՈՆ. Է՛ ալ, համը մի հաներ: Հիմա ընկե՛ր նախագահ, լսեցէ՛ք: Իմ ըսելիքս թիւյսիւղի խօսք չէ: Տարիքս յիսուներ կ'անցնի, զաշնակցականի տարիքս երեսուներ մը կայ: Կարճ կապենք: Ի՞նչ է աս զարուհաղը: Իշտե՛ դուք, իշտե՛ սըւտնք: Ի՞նչ ունիք ասանկ իրար կճելու: Դուք իրաւունք ունի՞ք սըւտնց բերանը փակելու ձեր թուղթէ օրէնքներով: Ես կ'ըսեմ ունիք: Ականջս ձեզի է ընկե՛ր նախագահ, բայց ներողութիւն: Աս տղաքն ալ ցանկեղ-ջիւան են, քիչ մ' էլլել պակաս կ'առնեն կուտան. իրաւունք ունի՞ն: Այո, ունին: Ինչո՞ւ պիտ' ըսէք: Ես ասանկ կը հասկընամ: Երեք ամսու տղուն վրայ մարը, հազար խոստումներով նանյիներ կ'ըսէ, որ ջոճուխը քնանայ: Դուք ալ՝ ազ ջոճուխի վրայ նանիներ ըսող մօր պէս, ասոնց պօղ-պօղ խոստացեր էք: Ներողութիւն: Ըսել է որ ատ ամէնը մեզի քնացնելու համար է, կ'ըսեն աս տղաք: Ջոճուխը խոստումէն-մոստումէն ի՞նչ խաւար է: Մէկ, երկու, երեք, մէյ մըն ալ վըլլուկ կը փրթի: Աս տղոցն ալ ատ է: Հիմա. որ դուք ատ ջոճուխի մա՛րն էք, տէ ծիծ սուէք որ ձանը կտրէ: Ո՞րն է շիտակ դուք թէ անոնք: Իմ գիտնալս աս բանին մէջ գէշ հոտ կայ: Ըսէք մեզի ո՞րն է շիտակ, ո՞րը ծուռ, թէ չէ, ասկէ վերջ սուրբ ալ գայ մեր հաւատքը ծուռ պիտի ըլլայ:

ՃԱՆ. Ընկե՛ր Անտոն, դու լինելով մի փորձառու մարդ, պէտք էր հասկանայիր իրերն ինչպէս որ կան: Եւ ահա, դուրս է գալիս որ դու խօսում ես մի մարդու պէս, որ որոշ տարիքից յետոյ նորից է մանկանում: Դու տեսնում ես, չէ՞, սրանց բոլոր ասածները մի անգում որ ժողովենք, մի ընկոյզի կեղեւ չի կարելի լեց-

նել: Ամէն հարց որ կապուած է մի զանգուածի հետ, նա գնում է մինչեւ ընդհանուր ժողով և հո՛ն... սրանք անփորձ տղաներ են էլլի՛:

ՉԱՔ. [ընդմիջ.] Օրը գիշեր չէ՛, ընկե՛ր, որ ըսենք թէ լոյս չենք տեսներ: Դուք երգում էք ըրած՝ ձեր հաշույն չեկած՝ ամէն իրողութիւն աղբին տալ: Մեզմէ յետինը, շնորհին ձեր ճառ խօսելու վարժապետութեան, այնքան փորձառու է, որ ձեր սրտի խորը կը թափանցէ: Մեզ «անփորձ են» ըսել, այդ կը նմանի այն մարդուն, որ արեւու պայծառ ճառագայթներուն սակ պտըտելու ատեն, աչքը կը խփէ ու այգպէսով, կ'ուզէ աշխարհի մարդոց հաւատացնել թէ գիշեր է: Մենք մեր բոլոր ըսածներուն տէրն ենք: Ատիկա երկար տարիներու կուտակումն է որու ժամանակը եկած ըլլալով...:

ՃԱՆ. (ընդմիջ.) Լա՛ւ, լա՛ւ, սպասիր, սպասիր: (որպէս թէ ոչինչ անցած է) Ուրեմն, ընկերներ, այսօր օրակարգի երկու հարց ունինք, որոնք են՝

ՉԱՔ. Իս կը կարծեմ թէ ս'էկ հատ է:

ՃԱՆ. Առաջին՝ ձեզ մի նոր կոմիտէ ընտրել, երկրորդ երկու ներկայացուցիչ շրջանային ժողովի համար:

ՉԱՔ. Մեր միտի օրակարգն է. դուք զեռ պիտի շարունակէ՞ք մեր զգացումներուն վրայ ճնշել, պիտի շարունակէ՞ք մեր ձայները աղբին տալ, պիտի շարունակէ՞ք մեզ սպանդանոց քշել, պիտի շարունակէ՞ք ժողովուրդի մը ճակատը մուր քսել, պիտի շար...:

ՃԱՆ. (դաժան) Պիտի լռե՞ս:

ՉԱՔ. (ի նիւթի մէջ ելած) Պիտի թողուք մեր օձիքը:

ՃԱՆ. Քո օձիքը վրադ է, լռէ՛, ալ կը բաւէ՛:

ՉԱՔ. Ի՞նչպէս թէ օձիք, վրաս է: Ո՞վ է մեզ հոս բերողը: Որո՞ւն պարտինք մեր բոշայի վիճակը:

Ո՞վ է մեզ օրօրողը :

ՃԱՆ. Պիտի լոնս : (զալ) Ի՞նչ ես ուզում :

ՁԱՔ. Քանի որ անկարող էք այս ժողովուրդի ճակատագիրը վարել , քաշուեցէք մէկդի , թողէք որ ամէն մարդ իր գլխուն ճարը նախի :

ՃԱՆ. Ա՛յդչափ :

ՁԱՔ. Ա՛յդչափ :

ՃԱՆ. Ընկերներ՛ր , վերջին խոսքս ձեր բոլորին , ըզգոյշ եղէք , առանց լոյսի մութ տեղեր չի մտնէք :

ՁԱՔ. Մեր գլխուն վրայ չծակած տեղ չէ մնացած :

ՃԱՆ. Ուրեմն ո՞վ կը հնազանդուի թող մնայ , իսկ ո՞վ չի հնազանդի կարող է մեկնել :

ՁԱՔ. Ասկէ , բացի ձեզմէ ո՛չ ոք կը մեկնի :

ՃԱՆ. Ինչո՞ւ :

ԽԱԶ. Ձեզմէ զատ ամէն մարդ դաշնակցական է :

ՃԱՆ. Ես ձեզ ասում եմ հեռացէ՛ք :

ՁԱՅՆԵՐ. Ո՛չ , ո՛չ , ո՛չ...

ՁԱՔ. Դո՛ւք հեռացէք...

ՍԻՐ. Խայտառակութիւն է սա :

ԽԱԶ. Խայտառակը դո՛ւն ես :

ՁԱՔ. Ընկերներ՛ր , Խաչիկ , Սիրգէյեան : Ընկեր ծանօրեկեան , կրնաք մեկնիլ :

ՃԱՆ. Լաւ : Գուցէ մի օր զզջաք : [Երբալու ասեն] Նորէն կը տեսնուինք (չ՛երբայ) :

ՁԱՅՆ ՄԸ. Աստուած չընէ :

ԱՆՏՈՆ. Է՛ ալ , է՛ ալ...

ԽԱԶ. Նոյն պայմաններով մէյ մըն ալ հոս չգաք :

ՁԱՔ. Ընկերներ՛ր , լոռթի՛ւն : Ուրեմն մեր բոլոր ըսածները իրականացան : Բայց նախ քան ժողովը ըսկսիլը եթէ այդ մարդուն ետեէն երթալիքներ կան ,

թող մեկնին : (ոչ ոք կը շարժի) Ուրեմն հիմա մեր ընտրութիւնը վերապահումները վերջացան : Ալ ընդհանուր ժողովն ալ հայելիի պէս կը տեսնենք : Ընտրեցէք նախագահ մը որ ժողովը վարէ :

ՁԱՅՆԵՐ. **Զաքարէ Խաչիկ Անտոն , Սիրգէյեան :**
[աղմուկ] :



Վ Ե Ր Զ

Վ Ր Ի Պ Ա Կ

| Էջ | Տող | Սխալ | Ճիշակ |
|----|-----|-------------|----------------|
| 14 | 10 | Դեռ չեկան | ՁԱՔ. Դեռ չեկան |
| 22 | 6 | ծծածը | ծեծածը |
| 24 | 18 | ըստիպողական | ստիպողական |
| 27 | 21 | ծնա | ծնաւ |
| 30 | 28 | լա | լաւ |
| 32 | 16 | բաթաթէս | բարբաթիս |
| 33 | 16 | չոտ | չոր |
| 33 | 30 | եմ | ես |
| 33 | 31 | ունիս | ունիմ |
| 50 | 4 | հասկնա՛ս | հասկնա՛յ |
| 63 | 6 | Ձաքար | Ձաքար |

ՀՀ Ազգային գրադարան



NL0368348

52024

ԳԻՆ 10 ՖՐ